№ 5 (202) XIX ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1909

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՊԱՇՏՊԱՆԻԵ՛ՆՔ

Պատմութիւնը յաւիտենական վերսկսումն է, հայոց պատմութիւնը — մասնաւորապէս։ Սուր ու ցաւոտ դրւագները վերադառնում են յուսահատեցուցիչ միօրինակութեամբ։ Եւ միշտ նոյն ուրոյն, բացառիկ գծերով, որ յատուկ են մեր բացառիկ ճակատագրին։

Ահեղ ու այլազան ուժեր են կռուում այդ ճակատագիրը։ Պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ցեղագրական ու քաղաքակրթական պայմանները դարբնել են այն՝ տխուր, անողորմ, երկաթեայ անհրաժեշտութեան սարդոստայնի մէջ։ Եւ սակայն, դրանք բոլորը չեն, այդ ուժերը „նախախնամութեան" թարգմաններ չեն, միահեծան և տիրական։ Կայ բուն գործօն, վճռող ուժը, որ մրափում է դարերից ի վեր կրաւորականութեան անդունդներում, որ մերթ ընդ մերթ փայլատակում է կայծակնալի հակազդումներով, որ վաղ թէ ուշ պիտի աջողէ չէզոքացնել և՛ պատմութեան, և՛ աշխարհագրութեան, և՛ ցեղագրական ու կուլտուրական բոլոր մահառիթ տարկանոնութիւնները և յեղաշրջել „ճակատագիրը", ազատ կեանքի ու ֆիզիքական յարատևութեան գրաւականներով։

Ժողովուրդների իմաստութիւնը—ահա նրանց ճակատագրի հզօրագոյն դարբինը։ Ժողովուրդների միահամուռ, հաւաքական կամեցողութիւնը—ահա մի ուժ, որի գրոհին չի դիմանայ ինքը ամենազօր „նախախնամութիւնը", „ճակատագիրը", „ֆատումը"։

Ո՞ւր էր, թէ մեր մէջ հասունացած լինէր այդ կորովի և իմաստուն կամեցողութիւնը։ Ցաշեղի պէս թաւալւում ենք մրրիկների յորձանքներում, առանց հակազդել կարողանալու, առանց հակազդել կամենալու... Ամեն մի յորձանք վրայ է հասնում աւելի հուժկու, աւելի թափով, քան նախընթացը և ամեն մէկը գտնում է մեզ յաւիտենօրէն նոյն տեղում ցցուած, ծոյլ ու անպատրաստ, հէգ ու աղերսող։ Եւ այս վայրկեանիս ամեն մի հայի շրթունքի վրայ է նոյն ցաւագին ու հարցական մրմունջը. „Ի՞նչ կը լինէր արդեօք, եթէ աղէտի ալիքն անցնէր աւելի հեռուն, դէպի Բարձր Հայք"...

Այդ հարցն ունի, տարաբախտաբար, դեռ այսօր ևս իր սոսկումնալի այժմէութիւնը։

Ոչ ոքի չը խարազանենք—միմիայն մեզ։ Ոչ ոք այնքան յանցաւոր չէ մեր կրած տառապանքների մէջ, ինչպէս մենք։ Ինչպէս ամբողջ հայ ժողովուրդը, ամբողջ թիւրքաց հայութիւնը։ Ի՞նչ արժէք ունին մահմեդական խուժանի դէմ տեղացող ճռռում ու ցասկոտ որոտումները։ Բողոքեցէ՛ք բնութեան մահաբեր տարերքների դէմ։ Արգելեցէ՛ք հողմերին՝ նիւթել իրենց աւերածները։ Սաստեցէ՛ք փոթորիկներին, ուրագանին, որ փոխեն իրենց ուղղութիւնը... Խուժանը մի այդպիսի „տարերք" է, կոյր ու անսիրտ, բութ ու մոլեգին։ Նրա դէմ չը բողոքենք — հերիք է։ Արդիւնքը զէրօ է, մի ահագին, կսկծեցուցիչ, յուսահատական զէրօ։

Չը բողոքենք և Եւրօպայի դէմ։ Ա՛հ, եթէ մեր բոլոր բողոքները, բոլոր այդ ջղոտ, հլոր ճիգերը, իսկզբանէ, մեր ազատագրական պատերազմի առաջին օրերից ի վեր ուղղած լինէինք դէպի միևնոյն, մեծ, փրկարար, արգասաւոր հոսանքի դաշտը, եթէ համիդեան բռնակալութեան իւրաքանչիւր հայ զոհի մէջ երեսուն տարուայ արհաւրալի փորձութիւնների ընթացքում գէթ թոյլ չափով արծարծուէր ինքնապաշտպանութեան բնազդը, մեր ճակատագիրը, անտարակոյս, այսօր այլ կերպ տնօրինուած կը լինէր, մենք չէինք դողայ աշնան տերևի պէս՝ գահավիժուող փոթորիկների հանդէպ։

Այդպէս չ՝արին։ Չ՝արծարծեցինք այդ փրկարար կրակը և տուժեցինք ահեղօրէն 13—14 տարի առաջ, տուժում ենք այսօր ևս, ո՞վ գիտէ, որքան դեռ պիտի տուժենք ապագայում... Ինչպէ՞ս չը խռովի հայ յեղափոխականը այդ հոգեմաշ իրողութեան առջև, որ եղել է սկզբից ի վեր նրա հոգսերի ու մտատանջութիւնների ամենացաւոտ առարկան։ Եւ ինչո՞ւ զարմանալ, որ 1895—96-ին, խուժանների երկարատև նախճիրային գործունէութեան ընթացքում, երբ հայ մարդիկ, հազարաւոր առնական ուժեր, առանց որևէ դիմադրութեան, նախիրների պէս սպանդանոց էին առաջնորդւում ու մորթոտւում, երբ միևնոյն ժամանակ մի քանի կտրիճ հրացանաւորների, մի քանի սրտոտ յեղափոխական երիտասարդների դիմադրութիւնը փրկում էր ամբողջ գիւղեր ու գաւառներ—ինչո՞ւ զարմանալ, որ այդ արտասովելի, դժոխային օրերում, հանդէպ այդ ոնարդ ու

կամաւոր նահատակութեան, հանդէպ մասսային այդ անօրինակ ոչխարամտութեան՝ հայ յեղափոխական խմբագրի կրծքից դուրս էր թռչում զարհուրելի և օրհասական աղաղակը. „անարժա՞ն ժողովուրդ, որ խուլ ես մնում ինքնապաշտպանութեան շարունակական հաւա՞ր դիմաց, դէ՞հ, կոտորուի՛ր“...

Այսօր նոյնն ենք։ Յեղափոխական փոքրամասնութիւնը—դարձեալ մեն-մենակ, իր սիզիֆեան բեռի հետ, գրեթէ իսպառ մեկուսացած ժողովրդային զանգուածներից, առանց գործօն, արդասաւոր համակրանքի ու աջակցութեան։ Ժողովուրդ և յեղափոխական մնում են տարբեր, յաճախ հակամարտ կատեգորիներ։ Որքան մեկը՝ ըմբոստ, շարժուն ու նախաձեռնող, այնքան միւսը՝ անշարժ, կրաւորական և համակերպող։ Այդ չարաբախտ հակօրինութիւնը (antinomie) մեր պատմական վերջին շրջանի ամենացայտուն, ամենաաղէտաբեր գծերից մինն է, որ տակաւին յարատևում է. հայ զանգուածը իր խոհերով ու զգացումներով, իր բովանդակ մտաւիճակով մինչև օրս նոյն գրանիտեայ ապառաժն է՝ հայ ինտելիգենտ յեղափոխականի օրհասաշունչ ու պաղատագին քարոզների հանդէպ։ Ցրամաբանօրէն անհեթեթ է թւում մօր ու զաւակի այդ բացարձակ հակադրութիւնը—բայց նա փաստ է, տարաբախտաբար։ Վերջին տասն ամսւայ ազատութեան շրջանը—ուր դարաւոր սարկութեան զոհ-համայնքը հնարաւորութիւն ձեռք բերեց ազատօրէն տնօրինելու իր վիճակը և ոչինչ չ՝արեց, գրեթէ ոչինչ՝ իր ֆիզիքական գոյութիւնը գէթ մասամբ ապահովելու գալոց ամեն պատահականութիւնների դէմ—աւելի ևս ուժգին շեշտեց այդ ողբալի հակադրութիւնը։ Եւ այսօր, երբ ազգովին նստած ենք, կարելի է ասել, ճարճատող հրաբխի վրայ, ենթակայ մի չարաշուք կացութեան յարափոփոխ քմահաճոյքին,—այսօր հայ ժողովրդային ընդհանրութիւնը նոյն ինքն, ճակատագրապաշտ անշարժութիւնն է, գերի Ֆատումին, ապաւինած նախախնամութեան, աւետարանին ու բոլոր աստուածներին, որոնցից երբէք չլսեց նա ըմբոստութեան ու մարդկային արժանապատուութեան փրկարար խօսքը, այլ միշտ միայն հնազանդութեան ու նախրային համակերպութեան պատուիրաններ։ Ցիրացուական մի եղկելի հոգեբանութի՛ւն...

Այդպէս—Ցաճկահայաստանում։

Այդպէս չէր հայրենիքի միւս հատուածի մէջ։ Կովկասեան հայութիւնը ևս, մի քանի տարի սրանից առաջ, կեանքի ու մահուան ճգնաժամ ապրեց։ Երկու դրութիւնները, տարբերուելով հանդերձ, նման են մի քանի խոշոր գծերով։ Այնտեղ ևս, Անդրկովկասում, մի խռովայոյզ, արիւնալի վայրկեանի մէջ—որ տևեց մէկ ու կէս տարի—մեր դէմ էին բէակցիայի բոլոր տարրերը. մեր դէմ—կառավարութիւնը, որ վճռել էր հնձել ազգի, ժողովրդի բոլոր կենսունակ ու դիմադրական ուժերը. մեր դէմ—թուրք խուժանը, իր ցեղակից աղաներով, իր հայատեաց մտաւորական առաջնորդներով, որոնք թև թևի կառավարութեան հետ, վճռել էին հրով ու սրով դուրս մղել հայ կուլտուրական ժողովրդին կովկասեան հօրիզոններից և հաստատել բէակցիայի ու վայրենութեան տիրապետութիւնը. մեր դէմ—բոլոր հարևանները, ռուս ու վրացի ժողովուրդների բոլոր գիշատիչ ու մարդատեաց վիժմունքները, մեր դէմ—նոյնիսկ նրանց ապիկար „իդէալոգների“ մեծամասնութիւնը, որ ուրիշ միջոց չէր գտնում օգնելու հայ հոգեվարք ժողովրդին, բայց եթէ մերկացնել շարունակ „հայկական պրովոկացիաները“, բայց եթէ քարկոծել ու վարկաբեկել հայ-ժողովրդական ինքնապաշտպանութեան միակ մարտնչող կազմակերպութիւնը... Բոլորը—մեր դէմ և չը կար նոյն իսկ այդ զարհուրելի տարտարոսում կովկասահայ ժողովրդի համար այն լղարիկ սփոփանքը, յոյսի այն աղօտ ճառագայթը — եւրոպական միջամտութեան հնարաւորութիւնը—որին այսպէս թէ այնպէս ապաւինում է թիւրքահայը աղէտների վայրկեաններում..

Եւ սակայն, ինչպէ՞ս եղաւ, որ այդ անօրինակ դաւադրութեան զոհը ճողոպրեց մեկուկէս տարուայ անհաւասար պատերազմի արհաւիրքներից, նա չ՝ընկաւ հարուածի տակ, գեանատարած չ՝աղերսեց իր արիւնռուշտ ոսոխներին, աշխարհասասան լաց ու բառաչով չը խլացրեց մթնոլորտը, այլ նոյնիսկ տարաւ անմոռանալի յաղթանակներ հակայեղափոխական այդ միլիոնաւոր կազմակերպած խաժամուժի դէմ, յաղթեց նոյնիսկ այնպիսի գաւառներում, ուր հակառակորդը կազմում էր ճնշող մեծամասնութիւն, ահեղ իր զինաւորութեամբ և հզօր՝ ոստիկանական աջակցութեամբ...

Որովհետև, հայ-ժողովրդական իմաստութիւնը այդ միջավայրում յաղթահարել էր իր „Ֆատումին“, հրաժեշտ էր տուել ճակատագրապաշտ, մեղկ ու տափակ ներշնչումներին, ըմբռնել էր աշխարհի օրէնքը, գոյութեան ցաւոտ մենամարտի անագորոյն „հրամայականը“ և առնական վճռականութեամբ ապաւինել էր իր մարտնչող փոքրամասնութեանը, իր անձնուրաց զաւակներին և նրանց փոքրաթիւ լէգէօնը վերածել էր համաժողովրդական, լայնատարած բանակի։

Այո, արիւնռուշ էպիզոդները յաճախ են կրկնւում մեր պատմութեան մէջ, բայց նրանք անցնում են, տարաբախտաբար, անհետևանք՝ թիւրքահայկական գիտակցութեան մակերևոյթից։ Ինքնապաշտպանութեան քարոզներն այնտեղ երբէք չեն հնանում, ընդհակառակը ստանում են միշտ նոր ու թարմ այժմէութիւն։ Չը յոգնենք, ուրեմն, „հինը“ կրկնելուց, և կրկնենք այն մշտընջենաբար, մինչև որ փոթորկէ ստրկամտութեան դպրոցում մարզուած, ֆատալիստական թոյնով մշակուած թիւրքահայ մասսայի գիտակցութիւնը։

Ամբողջ ժողովուրդը միացած իր մարտական կազմա-

կերպութեան դրօշակի տակ... Ահա ծանրակշիռ մի իրողութիւն, որ փրկեց Ռուսաստանի հայութիւնը ֆիզիքական ու բարոյական անէացումից։ Առանց այդ կազմակերպուած ուժի, Ռուսահայաստանը պիտի վերածուէր մի հսկայական գերեզմանոցի։

Որքա՜ն հրահանգիչ „նախընթացներ", քանի՜ խրատական փորձեր, իրողութիւններ... Յուլիսեան գոռ, յաղթական օրերին „Դաշնակցութիւնը" շատ չէր օրօրւում սին պատրանքներով։ Նրա առջևն էր ռուսական յեղափոխութեան ահեղ օրինակը։ Նրա համար հակահարուածները միանգամայն կոնկրետ տրամաբանական հնարաւորութիւն էին Յաճկաստանի պէս մի երկրում։ Նա գիտէր թիւրքը ամբոխային ընդհանրութեան մտավիճակը, ըմբոստ ամէն նորմուծութեան դէմ, գերի հնաւանդ պաշտամունքների, պատրաստ նետելու բոլոր „օտարօտի" շարժումների պատասխանատուութիւնը հայերի վրայ. և նա միջազգային գրկախառնումների ժխորի միջից հաւա՜ր էր կանչում հայ ժողովրդին՝ կազմակերպուել, համախմբուել ինքնապաշտպանութեան դրօշակի շուրջը։ „Զը կայ—գրում էինք անցեալ օգոստոսին նոյն այս էջերում—չը կայ մի այլ պահանջ աւելի հրամայական, քան կազմակերպուելու անհրաժեշտութիւնը։ Դժբախտութիւն կը լինի, եթէ չըմբռնենք այն. ոճիր կը լինի, եթէ գիտակցաբար ձեռքից թողնենք այնքան նպաստաւոր վայրկեանը, չ՚օգտուենք նուաճուած ազատութիւններից՝ զարկ տալու համար ժողովրդական կազմակերպման գործին... մենք որ ամենից աւելի պիտի տուժենք բարբարոսութեան յարձակողական վերադարձից"...

Մեր միջավայրը, տարաբախտաբար, խլել է մեզնից լաւատես լինելու ամէն իրական հնարաւորութիւն։ Որքան էլ կամենայինք փիլիսոփայ լինել, պաղ, անխռով վերլուծող անցքերի ու տրամադրութիւնների՝ չենք կարող, այնուամենայնիւ զսպել մեր մէջ „հաւա՜ր"-ի այդ նոյն աղաղակը... որովհետև Զարհուրանքի ծաւալը ընդունակ է մինչև աղիքները ցնցելու ամենաանխռով փիլիսոփային անգամ, որովհետև ապագան, հեռապատկերը դեռ չափազանց մշուշապատ է, թէական, պրոբլեմատիկ, որովհետև նոր ըէժիմն իսկ տակաւին չի թօթափել իր վրայից հնութեան փոշին...

Կուզէինք, ա՜հ, ներշնչել խոր, անկեղծ, անվերապահ հաւատով դէպի այդ նոր ըէժիմը, որի հետ կապուած ենք մեր կուսակցական ու ազգայնական էութեամբ, որի անունով զոհաբերել ենք այնքան կեանքեր։ Սակայն, ի՞նչ ենք տեսնում։ Զարդերից ի վեր սահմանադրական կառավարութեան բռնած ընթացքը տարաբախտաբար, չի կարող բաջալերել մեզ։ Այդտեղ երկչոտութիւնն ու աչառութիւնը—կանոն են և հայ երկրի արիւնաներկ տեսարանների հանդէպ՝ մենք չենք տեսնում իշխողների մէջ այն սրտացաւ տրամադրութիւնը, որ անհրաժեշտ էր ոճիրների քաւութեան ու յօշոտուած ժողովրդի հոգեկան վերակազմուման համար։ Ոչ. նոր կառավարութեանը հաճելի է, ըստ երևոյթին, նահատակութեան նոր խարոյկներ բարձրացնել հայերի համար... Տխուր, շարագործ հակասութիւն։ Ամբողջ աշխարհը, իրենք իսկ թիւրքերը գիտէին ու բարձրաձայն հռչակում են երկու ամսից ի վեր, որ Կիլիկիոյ ողբերգութիւնը մի մասն է յետագիմական լայնատարած գաւադրութեան, կազմակերպուած համիդիական ձեռքերով. ինքը մեծ վիզիրը հանդիսաւորապէս յայտարարեց այն՝ իր ծրագրային ճառի մէջ, և սակայն, նոյն սահմանադրական աղբիւրներից հրապարակ նետուեց նաև հրէշաւոր ամբաստանութիւնը հայ տարրի, հայ յեղափոխականների մեղսակցութեան մասին. նոյն ժամանակ, երբ Հիլմի փաշան պարլամենտական ամբիոնից հանրային ուշադրութեանն էր մատնում հայաջինջ դաւերի ճշմարիտ հեղինակներին, երբ Ֆերիդ փաշան գրաւոր կերպով հաղորդում էր մեր խմբագրութեանը, թէ հայերը չեն մեղադրում—այդ նոյն ժամանակ Պարիզի օսմանեան դեսպանատունը, ծանուցանում էր ֆրանսիական մեծ օրգանի մէջ, թէ կոտորածի պատասխանատուութիւնները բաժանւում են հայի ու թիւրքի մէջ.. Եւ ո՜րպիսի տենդոտ աճապարանք՝ միաժամանակ նուազեցնելու հայկական աղէտի ծաւալը և շլացնելու Եւրոպային՝ „օգնութեան" պալլիատիվներով...

Պէտք է անպատճառ „բաժանել" մեղքը—թէկուզ ընդդէմ առողջ դատողութեան, թէկուզ ընդդէմ ամենատարրական արդարութեան։ Պէտք է բաժանել — այդպէս էր որոշել սահմանադրական կառավարութիւնը արդէն սկզբից... Կարելի՞ է միթէ պատժել միմիայն „հաւատացեալներին", կարելի՞ է խնայել հայ „ֆէդայիներին"... Ադրինուպօլսի զինուորները Ադանա գնալով, խուժաններին զսպելու տեղ, սարքեցին հայոց արեան նոր բաղանիքներ,—այդ բաւական չէր, պէտք էր լրացնել պատկերը և ահա նոր դահլիճը հրահանգեց հարիւրաւոր հայ մարդկանց բանտարկութիւն, ինքնապաշտպան գաւառների զինաթափում ու ի վերջոյ... ահա մահուան դատավճիռներ մի շարք հայերի դէմ, ահա և հայկական կախաղաններ...

Անտարակոյս, „ազդել է" Բ. Դրան վրայ Ադանայի ջարդարարների սպառնալիքը՝ „ջնջել ամբողջ հայութիւնը, եթէ Դուռը շարունակէ իր խստութիւնները հաւատացեալների դէմ"։ Կարելի է և յ օ ր ի ն ե լ այդ տեսակ սպառնալիքներ, արդարացնելու համար յաչս Եւրոպայի մի թուլամորթ ու վեհերոտ քաղաքականութիւն... Կարելի է և կախել անմեղ հայերի՝ մահմեդականներին հանգստացնելու նպատակով...

Այդպէս ահա նոր ըէժիմը հակասական ու վարանոտ իր ընթացքով գալիս է սառը ջուր մաղելու ամենալա-

ւատես տրամադրութիւնների վրայ. նա չի կամենում բացարձակապէս ու վճռականօրէն խզել հնաւանդ մեթոդների հետ՝ հայ բազմատանջ ժողովրդի հանդէպ։ Այդ վերջինի յուսախաբութիւնը, որ արդէն առատ սնունդ էր ստացել վերջին 10 ամսւայ արտասուելի փորձերի ընթացքում,—շարունակւում է...

Գիտենք, անշուշտ, որ կան երիտասարդ-թիւրք շարքերում շիտակ, աննենգ, ամբողջական հոգիներ ևս, ներշնչւած ճշմարիտ լիբերալիզմի հրահանգներով, տոգորւած և կայսրութեան ամենակենսական շահերի գիտակցութեամբ,—մարդիկ, որոնց սիրտը կսկծում է ի տես հայոց անհատնում մարտիրոսութեան, որոնք ոչինչ անպատեհութիւն ու ծայրայեղութիւն չեն գտնում հայկական պահանջների մէջ, որոնք պատրաստ են անկեղծ, սրտաբաց, եղբայրաբար գործակցել մեզ՝ ընդհանուր հայրենիքի վերածնութեան աշխատանքում։ Նրանք առայժմ թւով աննշան են՝ տասնեակ միլիոնաւոր մահմեդական ընդհանրութեան մէջ...

Թև տանք այդ գիտակից, հասուն ու գաղափարական փոքրամասնութեանը և ձգտենք ընդհանուր ուժերով առաջն առնել նոր արիւնալի փորձութիւնների։

Բայց ամենից առաջ զարկ տանք ուրոյն նախաձեռնութեան, ամենից առաջ ապաւինենք մեր սեփական ուժերին։ Կարող են հանել օրհասական նոր վայրկեաններ, երբ այդ թոյլ փոքրամասնութիւնն իսկ կը չէզոքանայ, անզօր կը լինի հակադրելու և մենք կը մնանք բացարձակապէս մեն-մենակ յարձակողական հողմերի դիմաց, ինչպէս Կիլիկիայում... Աչքերնիս չը գոցենք իրականութեան հանդէպ։ Այդ իրականութիւնը—միշտ Անծանօթն է ու Արհաւրալին. նա միշտ յղի է հնարաւոր ու անհնարին անակնկալներով։ Երերուն է թէ ներքին և թէ արտաքին կացութիւնը, քաղաքական հօրիզոնը մթագնած է փոթորկաշունչ ամպերով։ Դաւեր կովկասեան ու պարսկական սահմաններում, դաւեր ու ընդհարումներ Պարսկաստանի մէջ՝ միջպետական մրցակցութեան շուրջը, տաճկական միջամտութիւններ, ցարի ու կայզերի առեղծւածային տեսակցութիւն, ռուսական խորհրդաւոր մեքենայութիւններ ամենուրեք, ռուս-թրքական ընդհարումի հեռանկար...

Ներսը—աւելի ալէծուփ ու ահաւոր։ Ահա կրետական խնդիրը վերստին հրապարակի վրայ և նոր բէժիմի պաղ ու անհաշտ դիրքի հանդէպ ամբողջ յոյն աշխարհը ալէկոծւած ու բողոքող։ Թիւրքիոյ յոյները՝ նոյնպէս յոգնած իշխող տարրի դիկտատորութիւնից, նոյնպէս ուժգին խմորումի մէջ։ Արաբական Եմենը շարունակում է որոտալ, ի ցոյց դնելով աշխարհի առաջ իր անյաղթելի կենտրօնախոյս ախորժակները։ Շարունակական յուզման մէջ է և Ալբանիան, ասպատակային խմբերը նորէն անհաշտ, սպառազինւած բեմ են գալիս Մակեդոնիայում։ Ահա միւս կողմից՝ պառաւ, զառամեալ Տաճկաստանը—իր բաշիբոզուկ խուժաններով, շարիաթապաշտ սոֆթաներով, փաթթոցաւոր ճիւաղներով—որ դեռ հեռու է կապիտալասիոնից, անձնատուութիւնից, որ մշտապէս դաւում է սահմանադրութեան ու ազատութեան դէմ, որ սպասում է պատեհ վայրկեանի, որպէսզի վագրի մոլեգին ոստիւնով նորէն գրոհ տայ ազատասէր ու անպաշտպան „գեավուրի“ դէմ...

Ո՞ւմ մտքից կարող են խուսափել այդ չարատանջ խորհրդածութիւնները։ Բոլոր սրտով մենք կը բաղձանք, որ անձեռնմխելի, անխախտ մնայ քաղաքական մեր իդէալը—ազատ ու անկախ Տաճկաստանը, իրաւահաւասար ու դաշնակից ժողովուրդներով. բոլոր ուժով կը ջանանք, ձեռք ձեռքի տւած սահմանադրական բանակի հետ, ապահովել երկրի առողջ ու բնականոն զարգացումը։ Բայց մեր կամքը և մեր ճիգերը չեն բաւի ախորժակների այդ կատաղի, ոլորտապտոյտ յորձանքի դէմ, ուր կարող ենք ինքներս սուզւել ու գահավիժւել դէպի անդարձ կորստեան անդունդ։ Արդէն իսկ ջարդերը շարունակւում են ընդհատ-ընդհատ, մանր ծաւալով երկրի բոլոր անկիւններում և կենտրօնական կառավարութիւնը — կամ ասենք՝ կառավարութիւնները, որովհետև, իրօք, մի քանի իշխանութիւն կայ ներկայումս օսմանեան կայսրութեան մէջ, շատ թէ քիչ իրարից անկախ, շատ թէ քիչ իրարու հակամարտ, մի կողմից պաշտօնական կառավարութիւնը, միւս կողմից „Իթթիհատը“, միւս կողմից Հէվքէթ փաշան—Նրանք բոլորն էլ, ըստ երևոյթին, անզօր են՝ սահմանադրական օրէնքի ուժը բռնադրելու ամենուրեք։ Եւրոպան էլ վստահութեան քիչ է տւել—գէթ առ երևոյթս—Երիտասարդ Թիւրքիային և տրամադիր չէ երևում միջամտելու, անգամ աւերիչ կատաստրոֆների վայրկեաններին... Ո՞ւր է մղում իրերի այս չարագուշակ, ճակատագրական ընթացքը... Իւրաքանչիւր մի կատաստրոֆ իր բոլոր կատաղութեամբ պայթելու է հայի գլխին, իւրաքանչիւրը պարզելու է նրա առջև բնաջնջման նոր անդունդ։ Այդտեղ է մեր եզակի տրագիզմը...

Ինչ որ կարող ենք անել այդ անդունդը կանխելու համար, անենք շուտով, և անենք ազգովին, հաւաքականօրէն։ Մեր բացառիկ կացութիւնը յարատևում է և մենք ոչ միայն դրա հանդէպ չենք ձեռնարկում բացառիկ միջոցների, այլ նոյնիսկ չենք կատարում անհրաժեշտագոյն minimum-ը մեր հաւաքական պարտաւորութիւնների։ Ազգութեան պահպանութեան խնդիր է դրւած մեր առաջ և ժամանակ է, վերջապէս—այժմ, նոր, սահմանադրական գոյութեան արշալոյսին—մշակելու բանաւոր ու առնական ազգային քաղաքականութիւն... Նա պէտք է մշակւի համաձայն ընդհանուր, տիեզերական բարոյագիտութեան „իմպերատիվներին“, հրամայականներին։ Նրա գերագոյն „իմպերատիվը“ պէտք է լինի—հաւաքական ինքնապաշտպանութիւն, իր բոլոր իրաւունք-

ներով ու միջոցներով։ Ոչ ոք չի կարող խլել մեզնից այդ սրբազան իրաւունքը։ Բոլոր ուժով պէտք է բողոքել զինաթափութեան այն փորձերի դէմ, որ կատարւում են Զէյթուն, Զոք-Մարզւան ու այլ սակաւաթիւ ինքնապաշտպան հայ կենտրոններում։ Եթէ անգամ միաժամանակ կամենան ու աջողեն զինաթափ անել շրջանների իսլամութիւնը— դա մեզ համար երաշխաւորութիւն չէ... Կրիտիքական վայրկեաններին, երբ մարդասպան ու խուժադուժ բնազդները, այս կամ այն միջադէպի, կամ քաղաքական նոր տագնապի առիթով, նորէն ազատ թռիչք կ'առնեն,—մահմեդական խուժանը դարձեալ իսկոյն բեմ կը նետուի լիակատար սպառազինութեամբ և միշտ էլ կը գտնուի մի ապիկար պաշտօնեայ, որ բաց կ'անէ խուժանի առջև տէրունական զինարանները։ Մինչև որ պաշտօնէութիւնը ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ հիմնականապէս չը զտուի, մինչև որ վարչութիւնը բոլոր հայաբնակ գաւառներում չը տրուի բացարձակապէս յուսալի և զօրաւոր ձեռքերի մէջ—անկարելի է արգելք դնել հայ ժողովրդի զինաւորութեան պահանջներին, առանց չարաչար վտանգելու նրա գոյութիւնը։ Այդ մասին է, որ պիտի մտածեն հայ ու տաճիկ սահմանադրական շրջանները, աշխատելով միաժամանակ փշրել մի քանի իշխողների անվճռական, վարանոտ դիրքը զինւորագրութեան ծանրակշիռ խնդրի դիմաց, աշխատելով ըստ կարելւոյն շուտ մղել հայ տարրը կայսրութեան բանակի մէջ։

Երէկւայ ջարդի սրտաճմլիկ իրողութիւններն են, որ հարկադրում են բոլոր ուժով ծանրանալ այդ էական ու աղաղակող պահանջների վրայ։ Մենք տեսանք, թէ ինչպէս մակեդոնական հօրիզոններից առաքուած զօրքը „խաղաղացրեց" Ադանան։ Նա տեսաւ, որ մուսուլման խուժանից ևս կոտրուած էին հայ ինքնապաշտպան գնդակներով, տեսաւ նաև, որ ինքնապաշտպան հայ խմբերը, տեղի տալով հիւպատոսական թախանձանքներին, յանձնել էին իրենց զէնքերը — օ՜ հնաւանդ, անուղղելի միամտութիւն—և ահա խաղաղարար զօրքը, մոռացած իր առաքելութիւնը, փոթորկուած մահմեդական դիակների տեսարանով, գրոհ տուեց անպաշտպան հայութեան վրայ և յօրինեց այնպիսի զարհուրանքներ, որոնց առջև նսեմանում են Սասունը և Ուրֆան... Կարելի՞ է արդեօք մոռանալ այդպիսի աղէխարշ նախընթացներ...

Ի՞նչ են ուզում մեր իշխողները։ Ինչո՞ւ են այդպէս աճապարանքով զինաթափ անում արդէն իսկ անզէն հայութիւնը։ Ինչի՞ց են վախենում. հայկական ապստամբութիւնի՞ց. Հայաստանի անջատումի՞ց, սեպարատիզմի՞ց... Բայց մենք չափազանց միամիտ կը լինէինք ենթադրել, թէ նրանք հաւատում են այդ առասպել-ուրուականներին։ Ի՞նչ է ուզում, ուրեմն, Հիլմի ու Ֆերիտ փաշաների կառավարութիւնը։ Եւ ինչո՞ւ են վրդովւում Կ. Պոլսի թիւրք օրգանները, երբ Դաշնակցութիւնը կամ „Դրօշակը" բողոքի ձայն են բարձրացնում ակներև անարդարութիւնների ու զրպարտութիւնների դէմ։ Զգւանքով յետ ենք մղում ոմանց կողմից մեզ վերագրուած „պրովոկասիոնի", „գրգռումի" ձգտումները։ Մենք ինքներս ենք պատերազմում ամեն կարգի պրովոկատորների դէմ, և մեզ համար կը լինէր բացարձակ ինքնասպանութիւն, եթէ ստանձնէինք նրանց դերը։ Երանի թէ բոլոր մարմինները իբրև ուղեցոյց ունենային այն շիտակ, լոյեալ ընթացքը, որին հետևում է Դաշնակցութիւնը միջկուսակցային իր քաղաքականութեան մէջ և հանդէպ Սահմանադրութեան։ Այդ շիտակութիւնն իսկ պահանջում է մերկացնել յայտնի արատներ, ջրել ստայօդ լուրերն ու չարագործ գաղտասուքները։ Եւ երբ մենք շարունակ յորդորում ենք մեր ժողովրդին դէպի ինքնապաշտպանութիւն, բնաւ չենք գնում մեր ընդունած յանձնառութիւնների դէմ, ընդհակառակը, վարւում ենք յօգուտ ազգամիջեան համերաշխութեան ամրապնդման ու բարգաւաճման։

Յարձակողական ու գրգռիչ ախորժակներով չենք տարւել երբէք, բայց չենք էլ կարող թոյլ տալ, որ խուժանային բարբարոսութիւնները յաւիտենականան մեր երկրում, շնորհիւ կառավարութիւնների երկչոտ, թուլամորթ, յաճախ երկդիմի քաղաքականութեան։ Պէտք է ապրեցնել այդ դժբախտ, արիւնաքամ ժողովուրդը, որ լաւագոյն շաղախն է փոքր-ասիական հօրիզոններում նոր կեանքի ու ռէժիմի համար և որին բոլոր սանդարամետեան ուժերը ձգտում են վերջնականապէս գետնին փռել, յօշոտել, բնաջնջել։

Պէտք է կանխել նոր աղէտները, հաւաքական, կազմակերպած ուժերով։ Կազմակերպութիւնը վաղուց արդէն հրապարակի վրայ է և վաղուց նա կոչ է անում բոլոր գործօն, ժողովրդասէր կամքերին։ Մենք կանգնած ենք մի անսովոր, դուցէ չը տեսնուած, համահայկական ճգնաժամի առջև. նրա արհաւիրքը տարածւում է Ադանայից մինչև Երևան, մինչև Սալմաստ ու Վասպուրական... Մի չափազանց վտանգաւոր կացութիւն, որ հրահանգում է ուժերի արտակարգ լարում ու աչալուրջ հսկողութիւն...

Այս ծանր օրերի մէջ ահագին է հայ ղեկավար շրջանների ու երիտասարդութեան պատասխանատուութիւնը։ Նրանցից պահանջում է անսահման տակտ ու ծայրայեղ շրջահայեցութիւն։ Նրանց իւրաքանչիւր մի քայլը պիտի չափուած, կշռուած լինի, համաձայն միջավայրի չարաշուք անհրաժեշտութիւնների... Զգո՜յշ հանդէպ անգիտակից ամբոխների, որոնք պատրաստ են ձեր իւրաքանչիւր մի ժեստը թարս ըմբռնել, մեկնաբանել միշտ ի վնաս ձեր բարեմտութեան ու շիտակութեան... Այո, աւա՜ղ, կուլտուրայի ու մարդկայնութեան ամենատարրական

պատուիրաններն իսկ մենք ստիպուած ենք քարոզել ամենածայրայեղ զգուշաւորութեամբ։ Երբէք, մանաւանդ, թող չը լսի „վրէժի“ ձայնը հայ գործող երիտասարդութեան մէջ... Դա վայրենիներին, բարբարոսներին արժանի զէնք է և չը պիտի թոյլ տանք մեզ—անգամ Դանտէան դժոխքի սարսափներից յետոյ — վար իջնել մինչև ջարդարար խուժանների բարոյական մակերևոյթը։ Ո՛չ, հեռո՛ւ վրէժինդրութիւնը։ Թո՛ղ դրա տեղ հնչէ ամենուրեք ինքնապաշտպանութեան ղօղանջը, որ աշխարհի օրէնքն է, տիեզերական փրկարար բնազդը, յատուկ բոլոր անասուններին ու ասուններին։ Այդ բնազդը... մենք այն տակաւին արծարծելու հարկի մէջ ենք, տարաբախտաբար...

Շտապե՛նք։ Հասարակական-ազգային կեանքի բոլոր օրինական գործօնները պիտի միանան ինքնօգնութեան դրօշակի շուրջը։ Պէտք է ցնցուի, վերջապէս, դաւաճան ու մահաբեր անշարժութիւնը։ Հայ ազգը կամ պիտի ապրի բանաւոր ու պատուաւոր գոյութեամբ, կամ թէ բնաւ չը պիտի ապրի։ Հայ ժողովուրդը կամ պիտի դառնայ մարտական մի համայնք, կարող ինքգինքը պաշտպանելու, կամ թէ խպառ պիտի չքանայ երկրի երեսից։

ԹԻՒՐՔԻԱ

ԿԻԼԻԿԵԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ

Ատանա, 6 մայիս

Պարագաներու բերմամբ չէինք կրցած մանրամասն կերպով նկարագրել այն ահարկու աղէտը, որուն զոհ գնաց դժբախտ Ատանան։ Հուրը, թուրը, թալանը ու ամեն տեսակ սրբապղծութիւն այսքան սաստկութեամբ չէին անցած ոչ մէկ երկրի վրայէն։ Այսօր Ատանան դերեզմանոց ու մոխրակոյտ մըն է միայն։ Փողոցները լեցուն են դիակներով ու փլատակներով։ Գրեթէ ամեն օր պէլէտիյէի կառքերը դիակ կը կրեն Սիհոն. հայու արիւնը ներկեց Սիհոնը ու դիակները Միջերկրականն են արդէն։

Ջարդի չորեքշաբթի ապրիլ 1 14-ին սկսելը և Պոլսոյ ապրիլ 13-ի դէպքերը պատահական զուգադիպութիւններ չեն։ Բնականաբար Երիտասարդը մեծ դեր խաղաց Ատանայի ջարդին մէջ։ Հոս կարելի եղածին չափ համառօտ կերպիւ պիտի նկարագրեմ դէպքը։

Պարտ ամսան մէջ քանի մը թիւրք սրիկաներ հայ երիտասարդի մը վրայ յարձակելով զայն սպանելու չափ ծեծած էին. հայը կը բողոքէ կառավարութեան մօտ, դժբախտաբար կառավարութիւնը շատոնց իր հեղինակութիւնը կորսնցուցած էր. Ատանայի կուսակալը—որ ջարդի հեղինակներէն մէկն է—թոյլ մէկն էր. ոևէ կարողութենէ զուրկ լինելով իր անգործութեամբ Ատանայի բէկսիօնէրներու ազդեցութեան տակ ինկած էր։ Վերոյիշեալ թիւրքերը կառավարութեան թուլութենէն երես ու համարձակութիւն առնելով՝ հայ տղուն վրայ կը յարձակին կրկին ու զայն սպանելու կը ձեռնարկեն, պռռալով թէ կառավարութեան դիմելով ինչ շահեցաւ. տղան իր անձը պաշտպանելով այդ երիտասարդներէն երեքը կը վիրաւորէ։ Վիրաւորեալ թիւրքերէն երկուքը կը մեռնին մի քանի օր վերջը, ասոր վրայ յուզումը կսկսի թիւրք շրջաններուն մէջ։ Բացէ ի բաց կը պռռային թէ „կեավուր մը ի՞նչպէս կրնայ սպանել երկու թիւրք“, կսկսէին թիւրք խուժանին մոլեռանդութիւնը գրգռել։ Արդէն այդ օրերը տարաձայնութիւն կար թէ Պոլսէն քանի մը բէկսիօնէրներ հասած են Ատանա։

Ապրիլ 13 (երեքշաբթի) դիշերը կառավարական պաշտօնատան առջև խուռն բազմութիւն մը խռնուած է, ամենքն ալ փաթթոցաւոր, ու հօճա մը քարոզելով խուժանը գրգռած է, որպէսզի անմիջապէս սկսին կեավուրները ջարդել։ Խուժանը այդտեղէն ցրուելով Ատանայի Սասթխանէին մօտ կը հանդիպին հայու մը ու անմիջապէս կրսպաննեն զայն։

Հետևեալ առտուն չորեքշաբթի (ապրիլ 14) արդէն բոլոր թիւրքերը փաթթոցաւոր են, ինչ որ շատ նշանակալից է։ Խուժանը կսկսի յարձակիլ Թօսպաղը Գալասը թաղը (երկու թիւրք սպաննող երիտասարդ հայուն բնակած թաղը) ու հանդիպած հայը վերաւորել։ Քէմէր ալթը ճամին, Քէչէճիլէր պաշը, Սալճալար, Եօրթան մահալէսի արդէն խռնուած են փաթթոցաւոր թիւրքերով։

Միւս կողմէն թիւրք երևելիները հայ վաճառականները կանչելով կը յորդորեն որպէսզի իրենց խանութները բանան։ Այդ օրը Զատկի չորրորդ օրը և քիչ մը ալ վախի պատճառով վաճառականները չէին համարձակած խանութնին բանալ։ Կուսակալը (ՃԷվատ պէյ, մասպէյնէն) ու թիւրք երևելիները կսկսին հայերը յորդորել խանութները բանալ տալու համար, սակայն, այս միջոցին (ժամը 4 ու կէս) ջարդը կսկսէր կամաց կամաց։ Թիւրք խուժանը մարթինով, ատրճանակով, բիրով, թուրով ու դաշոյնով զինուած սկսած էր ջարդել հայերը. բայց շուկան բազմութիւն չկար տակաւին։

Վալին նստած էր Թաշ մաղազա, ինչպէս նաև թիւրք ու հայ երևելիները։ Ասոնք տեսնալով որ գործը ուրիշ կերպարանք կստանայ, կամաց կամաց կը ցրուին։ Այդ միջոցին Դաւիթ էֆ. Ուրֆալեանը (անդամ եղեռնադատ ատեանի) կսպաննուի թիւրք ջոջերու դրդումովը։ Առաջնորդական փոխանորդը կառավարական պաշտօնատուն կը փախչի ընկերակցութեամբ վալիի ու գօմանտանի։ Նոյն միջոցին պէլէտիյէի մէջ կսպաննուի Յարութիւն էֆ. Շատիեկեանը, նոյնիսկ ի ներկայութեան կուսակալ ՃԷվատ պէյի։

Ժամը 5-ին հրացանաձգութիւնը այլևս սկսած է ամեն կողմ. թիւրք խուժանը կը յարձակի հայ թաղերուն վրայ, բայց հայերը ինքնապաշտպանութեան համար անմիջապէս իրենց տունները կը քաշուին ու թիւրքերուն կը յայտարարեն, որ եթէ յարձակին, իրենք ալ զէնք պիտի գործածեն. ասոր վրայ թիւրքերը իրենց թաղերը կը քաշուին. խուժանին մի մեծ մասն ալ արդէն փճացուցած ըլլալով Եէնի մահալէն, Շապանիյէն և քաղաքի դուրսը գտնուող մէկ քանի հայ թաղեր, կսկսի շուկայի թալանը։ Բոլոր խանութները թալլած են, բոլոր դրամարկղները կոտրուած։

Թիւրք խուժանը իր մ է թ է ր ի զ ը հաստատած էր կամուրջի գլուխը, Սալճրլար ևն։ Կասուրջէն քաղաք մտնող բոլոր հայերը ջարդուեցան և ի՞նչ սոսկալի տանջանքներով, անկարելի է երևակայել։ Բոլոր դիակները նետուեցան Սիհոն գետը։

Իբր թէ Ատանա գտնուող խուժանը ու զօրքերը չէին բաւեր ջարդելու համար հայերը, անմիջապէս Կարաէնէլու գաշան հեռագրելով այդ տեղի բէտիֆներն ալ բերին։ Անշուշտ, թիւրք կառավարութիւնը պիտի հերքէ զօրքին մասնակցութիւնը, բայց մենք կրնանք դրականապէս ապացուցանել այդ. վիրաւորեալներուն մեծ մասը կը կրեն մարթինի ու մաւզէր հրացաններու հետքերը։ Եթէ հայերս կը ստենք, վկայ են անգլ. հիւպատոսը, ժէզուիթները, սէօռերը, օտարները, յոյները ևն։

Միևնոյն ժամուն ու աւելի կանուխ ջարդը կսկսի գիւղերու մէջ. թիւրք, չէրքէզ, չէչէն ձիաւորներ հազարաւորներով կը յարձակին հայ գիւղերուն վրայ ու կը ջարդեն ինքնապաշտպանութենէ զուրկ խեղճ ու անպատրաստ հայերը։ Յարձակողներուն ամենքն ալ նմանապէս փաթթոց կը կրեն։ Իրենց նշանաբանը փաթթոցն է, մեծէն մինչև փոքրը փաթթոց կրած էին։

Ջարդը շարունակեց մինչև ուրբաթ (ապրիլ 16) ժամը 5-ին։ Հրացանաձգութիւնը դիշեր ցերեկ չէր դադրեր։

Բոլոր վիլայէթին մէջ հազարաւորներ սպաննուած են,

որոշ վիճակագրութիւն չէ կարելի պատրաստել, անկարելի է առայժմ։ Ատանայի շրջակայ բոլոր գիւղերը բնաջինջ եղան. հայ չեն թողուցած կոտորած են, երեխայէն սկսած մինչև ծերուկը անխնայ սուրի անցուցած են։ Բոլոր ագարակները, բոլոր տուները կրակի տուած ու անասունները, կահկարասիները ևն թալնած են։ Ինճերլիք, Ապտողլու, Կէմիտիւրէն, Շէյխ-Մուրատ, Սագրզլը, Գայբրլը ևն հայ գիւղերը մոխրակոյտեր են այսօր։

Ինչպէս ըսինք, ջարդը շարունակեց մինչև ապրիլ 16 ուրբաթ ժամը 5. ժէզուիթներու, ամերիկեան միսիոնարներու և այլնի միջնորդութեամբ հաշտութիւն մը գոյացաւ, զոր թիւրքերը կ'անուանէին ա ռ ժ ա մ ա ն ա կ ե ա յ զ ի ն ա դ ա դ ա ր։ Հաշտութիւնը (!!) կնքեցաւ սա պայմանաւ, որ հայերը յանձնեն իրենց բոլոր զէնքերը, ինչ որ հայերը կատարեցին ամենայն յօժարութեամբ. սակայն, տուներու մէջ մոռցած զէնքեր ալ գտնուեցան, որոնք պատուակ եղան ապրիլ 25-ի երկրորդ ահռելի ջարդին և մեծ հրդեհին։

Ապրիլ 16-էն մինչև ապրիլ 25 կիրակի ժամը 10-ին առերևոյթ խաղաղութիւն մը կար. կառավարութիւնը օրական 10—15 պարկ ալիւր կը բաշխէր ժողովրդին. հայ ժողովուրդը խնուած էր ամերիկեան միսիոնար Մր. Զէմպրսի տունը, ժէզուիթներու եկեղեցին ու դպրոցը, սէօքերու աղջկանց վարժարանը, ամերիկեան աղջկանց գօլէճը, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիները, հայ-հոմէականներու եկեղեցին ու հայ-բողոքականներու ժողովարանը, Մուշեղեան ու Աշխէնեան վարժարանները, Թրիփանի եղբայրներու ու գերմանացիներու գործարանները ևն ևն։ Իրենց տունները ապաստանած ընտանիքներ ալ կը գտնուէին։

Հոս չմոռնանք երեխասպանական յարգանք մը մատուցանել ժէզուիթ հայրերուն, Թրիփանի եղբայրներուն, ամերիկեան միսիոնարներուն, Թերզեան գերապայծառին, հայ-բողոքականներու ազգապետին, անգլ. հիւպատոսին ու գերմանացիներուն, որոնց ամէն մէկը պահապան հրեշտակի մը պէս կը մխիթարէր խեղճ ժողովուրդը։

Ապրիլ 16-էն ապրիլ 25 ժամանակամիջոցին թիւրքերն սկսած էին արդէն շրջիլ հայ թաղերը ու նախատալեց վարմունք ունէին հայերու հանդէպ, մինչև մինչև փոքրը փաթթոցները չէին հանած։ Ապրիլ 25-ին, ժամը 10 ու կէսին (կիրակի) յանկարծակի կերպով խուճապ մը կսկսի ու ժողովուրդը փողոցներուն մէջ խուռներամ կը վազեն։ Պատճառը գիտցող չկայ, իբր թէ հրացան մը նետուած է, ոմանք ալ ըսին թէ դոմէշ մը խենդացած է։ Ժամը 11-ին հրացանաձգութիւնը կսկսի, այս անգամ մաուզէր հրացաններու գնդակներն են, որ կը սուրան ամէն կողմ. զինուորներն են, որ կարձակեն. արդէն բոլոր փողոցներու անկիւնը պահակներ դրուած են, որոնք կսկսին հրացանաձգութիւնը. ժողովուրդը պատճառը կը հարցնէ, կ'ըսեն թէ բան մը չկայ։ Մութը կոխելուն պէս հրացանաձգութիւնը կը թուլնայ ու հրդեհը կսկսի. բոլոր հայ թաղը կրակի մէջ է, Մուշեղեանը, Ստեփանեան եկեղեցին Շահպաեան-Քէշիշեաններու մաղազան ևն։ Մուշեղեանի և գիմացի սրահներուն մէջ գիւղերէն ու շրջակայ թաղերէն ազատուող վիրաւորեալներ կը պառկէին 1100-ի չափ. կրակը սկսելուն պէս կը փախչին դուրս, բայց աւա՜ղ, այս անգամ մաուզէրի գնդակներն են, որ զիրենք կը հետապնդեն։ 1100 հոգիէն 80—90-ի չափ հազիւ ազատուեցան։ Մէկ մասը կրակի մէջ այրեցաւ, միւս մասը զինուորներու կողմէ գնդակահար եղաւ։ Անշուշտ կառավարութիւնը պիտի հերքէ ասոնք։

Հրդեհը շարունակեց երկու-երեք օր ու բոլոր հայ թաղը բնաջինջ եղաւ իր եկեղեցիով, իր դպրոցներով, իր ընտանիքներով, այնպէս որ այսօր 15—20,000 ոսկի հարստութեան տէր եղողներ օրական հացի կարօտ՝ հողի կամ ֆապրիկաններու խոնաւ գետիններու վրայ կը պառկին։

Երկուշաբթի ապրիլ 26-ին ժողովուրդը կը տանին կառավարական պաշտօնատունը իբր գերի։ Հոգ օր մը արևուտակ սպասցնելէ վերջ ոչխարի հօտի մը պէս կը քշեն քաղաքի դուրսը. ոմանք Թրիփանի եղբայրներուն գործարանը, ոմանք ալ գերմանացիներուն գործարանը կապաստանեն, որովհետև քաղաքին մէջ մնալ անկարելի էր այլևս։

Հրդեհի զոհ գացին ժէզուիթներու եկեղեցին, սէօքերու դպրոցները, Ս. Ստեփանոս եկեղեցին, բողոքականաց ժողովարանը, հայ հռոմէականներու եկեղեցին ևն. հայու տուն չձգեցին այրեցին։ Հիմակ ալ կելլեն անամօթաբար կը յայտարարեն, թէ այս ջարդին ու հրդեհին պատճառները հայերն են. հայերն են եղեր կրակ ձգողը, հայերն են եղեր թիւրքերը ջարդողը ևն։

Կառավարութիւնը գործունէութեան մէջ է—բոլոր հայերը բանտ կը լեցնէ. զինուորական ատեանը պիտի դատէ եղեր հայերը։ Մեր կացութիւնը շատ վտանգաւոր է և անօգնական ենք։ 2—300-ի չափ հայ երիտասարդներ բանտը անօթի կը պառկին։ Վաղը ասոնց ամենն ալ զինուորական ատեանին առջև հանելով թերևս կախաղանի դատապարտուողներ ալ ունենանք ու... սահմանադրութիւնը պիտի քալէ։ Կառավարութիւնն ալ տեղացի թիւրքերուն հետ միաբանած հայերը կ'ամբաստանէ իբր ապստամբ ու ըստ այնմ կը շարժի։ Պէտք է երեսփոխանական ժողովը խառն յանձնախումբ մը ղրկէ հոս, եթէ ոչ մեր վիճակը յուսահատական է. ո՛չ տեղական կառավարութեան վրայ վստահութիւն ունինք, ո՛չ ալ հոս գտնուած սպաներուն ու զինուորներուն վրայ։ Ամենքն ալ միաբերան կ'ըսեն. „կեսվուրլար ամմա՜ պէյլիք ալտընըզ հա՜“։ Խուժանային անզթութիւնն է հեգնութիւնով համեմուած։

Ատանա, 18 մայիս

Ինչպէս որ լսած էք հեռագիրներէ, Ատանայի ահռելի ջարդը երեք անգամ կրկնուեցաւ։ Առաջին ջարդին, չորեքշաբթի օրը, ապրիլ 1-ին, խուժանը բաղկացած ըլլալով թիւրք, չէրքէզ, քիւրդ, ավշար, արաբ և գնչու ցեղերէ, թւով 50 հազար, յարձակեցան քաղաքի վրայ. խուժանի մեծ մասը զինուած էր մարտիններով, որ նոյն օրը առաւօտեան յարձակելով կառավարական զինարանի վրայ հոն գտնուած բոլոր մարտին և մաւզէր հրացանները կրցած էր գրաւել։ Կառավարութիւնը երբէք միջամտութիւն մը չի ցուցնելով, ուղղակի կը յարձակին շուկայի վրայ, զինուորներու առաջնորդութեամբ, փողի նշանի մը վրայ։ Հայերը յանկարծակիի գալով՝ կրցան միայն կեդրոնական բուն 3—4 հայկական թաղերու մէջ և քաջաբար դիմադրել. այդ թաղերէ դուրս գտնուած բոլոր հայ տունները փճացան, այրեցան և մէջը մնացածներն ալ ջարդուեցան։ Խուժանը բոլոր խանութները կողոպտելէ վերջ, կըսկսի յարձակիլ ինքնապաշտպան թաղերու վրայ, և այնպիսի կարծիք մը ունենալով թէ հայերը պիտի կրնան ոպաննել փայտերով իսկ, շատ առաջ գացին և հոն այնպիսի կորուստներ տուին որ սարսափած ետ նահանջեցին, բազմաթիւ դիակներ թողլով փողոցներու մէջ։ Գիշերը վրայ հասնելով կըսկսին հրդեհել ամէն կողմէ. այս անգամ հայերը նորէն կը դիմադրեն՝ միշտ դէպի ներսերը քաշուելով։

Առաւօտեան դէմ թիւրքերը նորէն կըսկսին յարձակումը. այս անգամ զինուորները տեսնելով որ իրենց ցեղակիցները անզօր են, կըսկսին օգնել միանալով խուժանին, բայց նորէն ետ կը մղին բազմաթիւ կորուստներով, և անկարելի կ'ըլլար մնտենալ հայկական թաղերուն, և այսպէս շարունակ երեք օր և երեք գիշեր առանց դադարի կատաղի կռիւներէ վերջ, կառավարութիւնը հասկնալով թէ անկարելի է գրաւել հայկական թաղերը, զինադադար կ'ընէ, հրաւիրելով հայերը հաշտել թիւրքերու հետ։ Հայերը գիտնալով կառավարութեան խաբեբայութիւնը մերժեցին։ Ամբողջ կռուի միջոցին ներկայ էր անգլիական Մերսինի հիւպատոսը, որ չորեքշաբթի ապրիլ 1-ին լսելով Ատանայի ջարդի լուրը՝ հոս փութաց յատուկ կառախմբով, և իր գլուխը ունենալով 20 ձիաւոր զինուորներ. միշտ կը պատէր փողոցները խուժանը արգիլելու համար և ականատես ըլլալով այս ամբողջ կռիւներուն, զարմանքով կը խօսէր հայ կուսակցներու քաջութեան վրայ, որ անհաւատալի էր։ Վերջապէս կառավարութիւնը անգլիական և ֆրանսիական հիւպատոսները ապահովցնելով՝ թէ ասկէ վերջը եթէ ջարդ մը պատահի ինքը անձամբ պատասխանատու է, երկու հիւպատոսները գալով հայերու քով

կ'ապահովցնեն իրենց կողմէ հայերը. իբրև հաշտութեան նշան կառավարութիւնը կը պահանջէ որ հայերը զէնքերը յանձնեն։ Երկար ատանումներէ և մերժումներէ յետոյ, վերջապէս հայերը իրենց զէնքերը կը յանձնեն, ի հարկէ, վստահելով հիւպատոսներու երաշխաւորութեան։ Այսպէս անցաւ 10 օր, առանց դէպքի։

Եւրոպական զրահաւորները Մերսին հասան Ատանայի առաջին դէպքի լմննալէն երկու օր վերջ, այսինքն հայերը զէնքերը յանձնելէն երկու օր վերջ, երբ արդէն քաղաքը խաղաղած էր։ Զրահաւորները հասնելէն 5 օր վերջը, Ռոտոսթոյէն և Կելիպօլուէն 1300 հատ զինուորներ հասան իբրև թէ հայերը պաշտպանելու համար։ Ատոնց Ատանա հասնելէն օր մը վերջը սկսաւ երկրորդ դէպքը. զինուորները կիրակի ժամը 10-ին (ր. թ.), իրիկուան դէմ, յարձակելով հայկական վարժարանի վրայ, ուր բոլոր վիրաւորեալները պատսպարուած էին, նախ կրակի տին և յետոյ պաշարելով՝ փախչողները սկսան զարնել և ներսը մնացածները ամբողջն ալ ողջ ողջ այրեցին. մնացած հայ տունները թալանեցին, ջարդեցին և յետոյ այրեցին։ Ժողովրդէն ողջ մնացածները Ֆրանսական ժէզուիթներու և ամերիկեան միսիոնարներու գօլէժները փախան ապաստանեցին։ Այս դէպքը զրահաւորներու Մերսէնի առջև գտնուած ժամանակը պատահեցաւ, որ պզտիկ միջամտութիւն մը իսկ չի ցուցուցին և յաւալիօրէն պիտի ըսել որ այդ տհոռելի ջարդի կրկնումի անուղղակի պատճառը երկու հիւպատոսներն եղան, որ հայերը համոզելով զէնքերնին յանձնել տին։

Ասոր վրայ վալին պաշտօնանկ ըլլալով, նոր դազան մը եկաւ որ աւելի դէշ մէկն է, քան թէ նախկինը։ Նոր եկող վալին տեսնելով որ բոլոր հայերու տուներն ու խանութները թալանուած; այրուած և իրենք ջարդուած ըլլալով՝ մնացած են միայն երկու հաստատութիւններ—մէկը ֆրանսական, միւսը ամերիկեան, ուր ողջ մնացած հայերը ապաստանած են, հրամայեր է զինուորներուն որ այս երկու հաստատութիւններն ալ կրակ տան և մէջը մնացածները ջարդեն։ Այս հրամանի վրայ երրորդ ջարդը կը սկսի. անմիջապէս կրակ կուտան ֆրանսական հաստատութեան և մէջը գտնուողներէն փախչել ուզողները կը սպանուին, իսկ ներս մնացածները կ'այրուին. ասիկա լմնցնելով կը սկսին ամերիկեան հաստատութեան, բայց այս միջոցին անգլիական հիւպատոսը օգնութեան հասնելով կրակը մարել կուտայ և կ'ազատէ մէջը մնացածները։

Ահաւասիկ ամբողջ իրողութիւնը հակիրճ կերպով այն սսկալի ջարդին, որ տեղի ունեցաւ սահմանադրական կառավարութեան տակ և եւրոպացիներու աչքին առջև... Առանց չափազանցութեան կը վստահեցնեմ թէ Ատանա հայու մը ոչ տուն և ոչ խանութ մնացած է։ Քաղաքը աւերակ է։ Ատանայի ջարդի միջոցին քաղաքէն դուրսը գտնուող ամբողջ հայ գիւղերը և ագարակները փճացուցին և բնակիչները ջարդեցին։ Ատանայի կուսակալութեան մէջ միմիայն Սիս, Զէօք-Մերզուան (Տէօրթեօլ) և Հաճին քաղաքները ազատուեցան իրենց դիրքերու շնորհիւ և լաւ դիմադրութիւն ցուցնելով՝ յարձակուող խուժանին մեծ կորուստներ տուին, մանաւանդ Դէօրթ Եօլը, ուր խուժանը զինուորներու հետ միացած յարձակելով ոտիպուած եղաւ ետ նահանջել, ապա զինուորները սկսան ռմբակոծել քաղաքը թնդանօթներով, բայց հայերը ռմբաձիգ զինուորները ղարնելով գրաւեցին թնդանօթը և մինչև հիմայ իրենց զէնքերը չը յանձնեցին կառավարութեան։ Սիսի մէջ հայերը բերդը քաշուելով լաւ դիմադրութիւն ցուցուցած են, և իրենց կառավարիչն ալ լաւ մարդ մը ըլլալով՝ հայերուն զէնք բաշխած է որ քաղաքը պաշտպանեն։

Ատանայի առաջին ջարդի միջոցին Տարսոնը ևս յարձակման ենթարկուեցաւ. խուժանը միացած զինուորներուն հետ այրեցին հայերու ամբողջ տունները և թալանեցին. անձի կորուստը քիչ է։ Մերսինի շրջակայ գիւղերը գտնուող թիւրք խուժանը լսելով Ատանայի և Տարսոնի ջարդը՝ յարձակեցաւ քաղաքի վրայ. հայերը կեդրոնացած ըլլալով երկու հայկական թաղերու մէջ պաշտպանողական դիրքեր բռնեցին, բայց Մերսինի կառավարիչը քաջ մարդ մը ըլլալով զինուորներու միջոցով վռնդեց բոլոր խուժանը և ներս չթողուց և ինքը անձամբ զինուորներու գլուխը անցնելով գիշեր և ցերեկ հսկեց քաղաքի վրայ, մինչև որ հասան զրահաւորները։

Կիլիկիոյ գոհերուն թիւն է—սպանուած, վիրաւոր—մօտ 20,000. միայն Ատանայի մէջ 10,000 է. շատ դիակներ ծովը հասած ըլլալով, եւրոպական զրահաւորներու ամիրալները ամեն օր ասոնց լուսանկարները կ'առնեն, առանց ամչնալու։ Կառավարութիւնը ամեն օր 20—30 ծովին եզերքը նետուած դիակները փոսերու մէջ կը թաղէ։ Ատանային գալով, քաղաքին մօտենալ անկարելի է, դարշահոտութենէ. ողջ մնացած հայերը քաղաքէն դուրս վրաններու տակ կը պատսպարին, բայց սարսափելի հիւանդութիւն կայ իրենց մէջ, ամեն օր 20—25 կը մեռնին թշուառութենէ։ Աննկարագրելի վիճակ մը։

Կառավարութիւնը Ատանայէն և Տարսոնէն փախչողները ձերբակալելով ետ Ատանա կը զրկէ և ճամբան խուժանը կը յարձակի վրան և կը սպաննէ։

Սկսան խուզարկութիւններ ամենուրեք, գրաւելով հրացան, ատրճանակ, դանակ, դիրք, պատկեր, բաց նամակ և ինչ որ կը պատկանի յեղափոխութեան։ Յեղափոխականներէ շատերը բանտն են։ Թրքական պաստով եկող նամակ, թերթ, և ինչ որ ալ ըլլայ երբէք չեն յանձներ հասցէներուն։ Կառավարութիւնը Ատանայի մէջ 100-ի չափ հայեր ձերբակալելով բանտարկած և բանտի մէջ ոտքեր-ձեռքերը և վիզերը շղթայակապ կը շարչարեն ըսելով թէ իբրև իրենք եղած ըլլան պատճառը այս ամբողջ կոտորածին։ Քանի մը հայեր անգլիական հիւպատոսարանը մտած են. կառավարութիւնը սաստիկ կերպով կը պահանջէ իրեն յանձնել, բայց հիւպատոսը մերժած է. կառավարութիւնը անոնց գտնուած տունը հսկողութեան տակ առած է և վերջին անգամ դիմելով հիւպատոսին բաց է թէ կամ յանձնէ կամ զինուրական ուժով պիտի մտնէ և ձերբակալէ. չենք գիտեր թէ ինչ պիտի ընեն։

Այս շաբաթ Պօլսէն հասան Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Պատասխանատու Մարմնոյ կողմէ բժիշկներ, դեղագործներ և մասնաւոր տիկիններ վիրաւորեալները դարմանելու համար։ Պոլսէն 6 հոգի զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներ եկան, զինուորական ատեան կազմեցին և ամբողջ Ատանայի կուսակալութեան համար պաշտպանման վիճակ հրատակեցին։ Որևէ յարաբերութիւն անկարելի է։ Ատանայի թիւրք խուժանը միանալով զինուորներուն բացարձակապէս մերժեր են զինուրական ատեանը և հակառակ պարագային պիտի ապստամբին՝ առարկելով թէ կառավարութիւնը իրենց հրաման տուաւ հայերը ջարդելու, հիմա ի՞նչպէս կ'ըլլայ որ նոյն կառավարութիւնը կուզէ զիրենք պատժել։ Պաշտօնապէս ծանուցեր են հիւպատոսներուն, թէ իրենք հրամանով բրին այս ջարդը և հրաման տուողը կառավարութիւնն է. ասոր համար իրենք յանցաւոր չ'ըլլալով, պէտք չէ որ պատասխանատուութեան քաշուին և պատժուին. ասոր վրայ զինուրական ատեանը Պոլսէն 10,000 զինուր պահանջած է։

ԱՂԷՏԻ ՇՈՒՐՋԸ

Ատանայի անցքերու և հայ յեղափոխականներուն ուղղուած պաշտօնական ամբաստանութիւններու առթիւ՝ մեր խմբագրութիւնը, ինչպէս յայտնի է, հեռագրով բողոքած էր օսմանեան Խորհրդարանին։

Այդ հեռագրին ի պատասխան, քիչ յետոյ, Ժընեվի օսմանեան ընդհ. հիւպատոսը յանձնեց խմբագրութեանս ներքին գործոց նախարարի մի ընդարձակ հաղորդագրութիւնը (23 ապրիլ 1325 թ.) ուղղուած արտաքին գործոց նախարարութեանը և անոր միջոցով՝ զրկուած Ժընեվ։ Ահաւասիկ քաղուածօրէն և թարգմանօրէն (ֆրանսերէնէ) անոր պարունակութիւնը.

„Պատիւ ունիմ յանձնելու Ձերդ գերազանցութեան պատճէնը այն հեռագրի, որ Ժընեվի „Դրօշակ" կոմիտէն ուղղեր

է „Եէնի Գազեթա“ լրագրին *), Ատանայի ցաւալի միջադէպի վերաբերմամբ, որի առիթով ժամանակին իմ պաշտօնատունը տուած է արդէն բացատրութիւններ Երեսփոխանական Ժողովին և որի մասին եղած վիճաբանութիւնները արտատպուած են „պաշտօնական թերթին“ մէջ։

Ապա զեկուցանողը կը հաւաստիացնէ թէ ջարդերու սկզբէն ի վեր „մինիստրութիւնը ամեն ճշտութեամբ կատարած է իր պարտականութիւնը, մինչդեռ յայտնի մարդիկ, մտքերը գրգռելու նպատակով, հրապարակ կը նետէին սէնսասիօն լուրեր, իբր թէ կառավարութիւնը հեռագրած է եղեր վիլայէթներուն՝ ձեռք չտալ եւրոպացիներուն և կոտորել միմիայն հայերը“։

„Այդ ոուտ լուրը հրատարակուեց և այդ հեռագրի պատճէնը, որ հերքումի իսկ արժանի չէ, կարդացուեցաւ Երեսփոխանական Ժողովին մէջ։ Մինիստրի Ատանայի հետ փոխանակած հեռագիրները, որոնք նոյնպէս կարդացուեցան պարլամենտի նիստին մէջ, այնքան յստակ են, որ երկու տեսակ մեկնաբանութեան չեն կարող ենթարկուիլ։

„Եթէ խռովութիւնները անկարելի եղաւ ճնշել անմիջապէս, պատճառն այն է որ—ինչպէս հաստատուած է անժխտելի փաստերով—ճամբուած զօրքը չէր կարողացեր ժամանակին տեղ հասնիլ, մեծ տարածութեան շնորհիւ“։

Այնուհետև մինիստրը կը խօսի կարօտեալներուն օգնելու համար իր արձակած հրահանգներու մասին, զրկուած դրամի, քննիչ յանձնաժողովի ու յանցաւորներու պատժման մասին, կը յայտարարէ թէ այդ պատժումը պիտի կատարուի առանց ցեղի ու կրօնի խտրութեան (sic!) և ամենայն արագութեամբ ու խստութեամբ։ Կ'աւելցնէ ի վերջոյ, թէ բացարձակապէս անհիմն է եւրոպական թերթերու տարածած այն լուրը, որի համեմատ իբր թէ օսմանեան կառավարութիւնը անաչառութէամբ չէ կատարեր իր պարտքը և իբր թէ ան կը նետէ մեղքը հայերուն վրայ։

*

Թիւրք կառավարութեան այդ զեկուցագրին մեր խմբագրութիւնը պատասխանեց ներքին գործոց նախարարին ուղղուած հետևեալ գրութեամբ **)։

Պարոն Մինիստր,

Ապրիլ 26-ի ձեր թէզքէրէով, զոր արտաքին գործերի պ. նախարարը կ'ուղղէ մեզի Ժընեվի ընդհանուր հիւպատոսի միջոցով, դուք կը բարեհաճիք հանդիսացնել մեզ այն յուզմունքի առիթով, զոր արտայայտած էինք Ատանայի ողբալի անձերու մասին զրկած մեր հեռագրին մէջ։

Բողոքի այդ հեռագիրը մենք ուղղած էինք Երեսփոխանական Ժողովին, ի դէմս նախագահի։ Իսկ պատճէնը կ. Պոլսի քանի մը թերթերուն։

Մենք կը բողոքէինք այն ապշեցուցիչ ամբաստանութիւններուն դէմ, որոնցմով Ատանայի իշխանութիւնները հայ յեղափոխականները կը ներկայացնէին իբր Ջարդերու դրդիչ ու նախայարձակ։ Այդ մեղադրանքը կարդացուեցաւ կառավարութեան ներկայացուցչին բերնով պարլամենտի ամբիոնէն. նա միևնոյն ժամանակ շրջան ըրաւ եւրոպական մամուլին մէջ։ Մենք այժմ կը կարդանք անոր տխրալի պատճառաբանութիւնը պաշտօնական „Թագվիմ Վէկայի“ № 203-ի մէջ։ Անոր համեմատ՝ հազարաւոր հայ ֆէդայիներն են որ ռումբերով ու մաւզէրներով ոպառազինուած, սարսափ էին տարածեր մահմեդական ազգաբնակութեան վրայ։

Այդ տեսակ հրեշաւորութիւններ կը զեկուցանուին պարլամենտին, կը լսուին հաւանութեան շեշտերով և ի ցոյց կը դրուին „պաշտօնական թերթին“ մէջ, որ պիտի տարածէ այդ սարսափելի մեղադրականը մահմեդական աշխարհին մէջ, բորբոքելով ատելութիւնն ու զայրոյթը յաւիտենական ոչնչին դէմ։

Մենք պարտք սեպեցինք բողոքել օսմանեան պարլամենտին ու քաղաքակիրթ աշխարհին առջև մի անորակելի զրպարտութեան դէմ։

Ձեզ անյայտ չէն, պ. մինիստր, բարեկամական այն կապերը, որ մենք ունեցած ենք „Երիտասարդ Թիւրքիոյ“ հետ Յուլիսեան Յեղափոխութենէն առաջ և անկէ յետոյ։ Ձեզ յայտնի են և այն լաւ զգացումները, որոնցով տոգորուած են մեր կոմիտէներն ու ժողովուրդը՝ մահմեդական ազգաբնակութեան վերաբերմամբ։

Մեր ծրագիրը, մեր քաղաքական բաղձանքներն ևս անծանօթ չեն Երիտասարդ թիւրքերու մեծամասնութեանը, որոնց հետ աշխատած ենք ընդհանուր հայրենիքի ազատագրութեան և բարօրութեան համար։ Այդ իդեաները հայ բովանդակ ազգաբնակութեան իդեաներն են։ Ոճիր է, սրբեմ, ընդդէմ մարդկութեան, հոչակել հայ յեղափոխականները իբրև խռովարար, իբրև ազգային ատելութիւն ու թշնամութիւն սերմանողներ։ Այդ տեսակ ոճիր մը գործեցին Ատանայի իշխանութիւնները զարմանալի սանձարձակութեամբ, երբ արդէն աւերեր ու արիւներ էին ընդարձակ տարածութիւններ, խուժանի ու հակայեղափոխական զինուորութեան ստոր բնազդներու շղթայազերծ բռնկումով։

Ահռելի ողբերգութիւնը կատարուած է. նա եկաւ միանալու ողբերգութեանց այն շարանին, որոնք խաղացեր էին Համիդեան նզովեալ թագաւորութեան օրով։

Կեդրոնական կառավարութիւնը կատարե՞ց արդեօք իր բովանդակ պարտականութիւնը այդ խմբովին սրածութիւններու առնն, որ տևեցին 15 օր անընդհատ ամբողջ վիլայէթին մէջ։ Սա մի հարց է, որու վրայ աւելի լաւ է չծանրանալ։

Այսօր մենք ամբողջ հայ ազգաբնակութեան հետ սպասողական մի անձկալի վիճակի մէջ ենք։ Մենք կրսպասենք արդար ու անաչառ դատ ու ճնշում։ Արդկայնութիւնն ու քաղաքակրթութիւնն այդպէս կը կամենան։ Սահմանադրութեան պատիւն այդպէս կը հրամայէ։

Եթէ, *par impossible*, սահմանադրական կառավարութիւնը մեղանչէ այդ հրամայական պարտականութեան դէմ, նա կը ձգէ ատելութեան անանցանելի վիհ մը հայ և մուսուլման ժողովուրդներու միջև. դա կը լինի, արդարև, ամենադառն յուսախաբութեան գագաթնակէտը։

Չափազանց ցաւալի է արձանագրել, որ վերջին 10 ամսւայ ընթացքին մէջ նոր ռէժիմը ոչինչ չ'բրաւ այդ տարաբախտ ժողովրդի համար, ոչինչ չձեռնարկեց՝ բարւոքելու վարչութիւնը, առողջացնելու բիւրօկրատական մթնոլորտը, ուր կը վխտան Համիդեան յետադէմ ու հայատեաց պաշտօնեաներ։ Զուզեցին նոյնիսկ փոխադրել վալիները, չհամարձակեցաւ նոյնիսկ դպչել յայտնի Ջարդարարներուն, որոնց ներկայութիւնը յարատև սպառնալիք մըն է հայ ազգաբնակութիւններու համար։ Անտարբերութիւնը կայսրութեան ամենէն տառապող տարրի հանդէպ՝ բնորոշ գծերէն մէկն էր նոր ռէժիմին։ Անպատժութիւնը քաջալերեց յանցաւորներուն, մղելով զանոնք դէպի նոր սխրագործութիւններ։

Ատանայի ողբերգութիւնը ատոր հետևանքն է։ Նա կրսպառնայ ընդհանրանալ և նորէն հայ ժողովուրդը մատնած է վտանգալի կացութեան մը ամենավատթար քմահաճոյքներուն։

Պարոն Մինիստր,

Մեզ համար չափազանց տխրալի է այնոնման փաստեր արձանագրել յեղափոխական Թիւրքիոյ ամենափայլուն յաղթութեան օրերուն։ Բայց այն մեծ պատասխանատուութիւնը, զոր մենք ստանձնած ենք հանդէպ մեր ժողովրդի, որի դատը պաշտպանած ենք 20 տարիէ ի վեր անհաւասար ու արիւնալի մենամարտի մէջ Արդիւլ-Համիդեան բռնակալու-

---

*) Անհասկանալի է, թէ ինչու մինիստրը կը յիշէ միայն „Եէնի Գազեթան“. մեր հեռագիրը ուղղուած էր պարլամենտին, յանձին նախագահի. պատճէնը դրկուած էր մեծ վիզիրին, ինչպէս նաեւ մի քանի հայ եւ թիւրք լրագիրներուն։

**) Բառացի կը թարգմանենք Ճրանսերէնէ։

թեան դէմ—այդ պատասխանատուութիւնը կըստիպէ մեզ, ի պատասխան ձեր հանգստացուցիչ յայտարարութիւններուն, ըսել ձեզ, այս քանի մը ճշմարտութիւնները, զոր մենք միանգամայն անհրաժեշտ կը սեպենք։ Այսօր հայ ազգաբնակութեան գերագոյն բաղձանքն է՝ որ իր կառավարութիւնը խօսքէն անցնի, վերջապէս, դէպի գործ։ Մենք կըսպասենք, վստահելով ձեր, ինչպէս և ամբողջ կառավարութեան ու պարլամենտի, իմաստութեանը։ Անոնցմէ կախուած է վճռել՝ արդեօք Թիւրքիոյ այլազան տարրերը պիտի ապրի՞ն այսուհետև սերտ համերաշխութեան մէջ, թէ՞ պիտի յօշոտեն զիրար, ի վնաս կայսրութեան կենսական շահերուն և յօգուտ թշնամիներուն, որոնք զայն կը հետամտեն։

Ընդունեցէք Եայլն։

ԽՄԲԱԳՐ. „ԴՐՕՇԱԿԻ"
ՕՐԴԱՆ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

***

Պարիզի օսմանեան դեսպանատունը, հրահանգուած, անշուշտ, կեդրոնական կառավարութենէն, հարկ տեսաւ իր կողմէն հերքում մը տալ վերոյիշեալ զրպարտութեանց առթիւ կ. Պոլսոյ ուղղած մեր հեռագրին *) հրատարակեց Temps լրագրի մէջ ընդարձակ ու բաւականաչափ կրքոտ ծանուցում մը, որով կը յայտարարէր թէ հայ կոմիտէները կ'ուզեն իբր թէ կեղծ լուրերով վարկաբեկել սահմանադրական կառավարութիւնը, թէ ջարդերու մէջ յանցաւորը միմիայն միւսիւլմանները չեն, թէ „պատասխանատուութիւնները կը բաժնեին" ևլն։

Temps-ը, ինչպէս և պարիզեան մի շարք ուրիշ թերթեր, հրատարակեցին քանի մը օր յետոյ դեսպանատան այդ ծանուցման դէմ մեր խմբագրութեան այս հեռագիրը.

Կը ցաւինք որ հարկադրուած ենք բողոքել Պարիզի օսմ. դեսպանատան կողմէ մայիս 24-ին Temps-ին հաղորդուած ծանուցագրին դէմ։ Արձագանք տալով հայկական ջարդերու կազմակերպողներու նախապէս տարածած լուրերուն՝ դեսպանը կը յայտարարէր որ Ատանայի ջարդերուն պատասխանատուութիւնը կը բաժնուի միւսիւլմաններուն ու հայերուն միջև և կուզէ հաւատացնել որ իբր մեր կոմիտէն կը ջանայ վարկաբեկել օսմանեան սահմանադրական կառավարութիւնը։

Խիստ չլսուած բան է, որ այնքան վկայութիւններէ յետոյ, նոյնիսկ նոր բէժիմի ներկայացուցիչներու կողմէ, որ միաբերան կը հաստատեն թէ կոտորածները ապրիլ 13-ի պետական հարուածէն առաջ սարքուած էին Համիդի պաշտօնեաներէն, արդի կառավարութիւնը տակաւին կը ջանայ պատասխանատուութիւնները կիսել և հայեր տեսնել սոյն ահռելի կոտորածներու թելադրիչներուն մէջ։ Խիստ միջոցներ ձեռք կ'առնեն հայերուն դէմ և կուզեն անպատճառ զանոնք արհեստով չարագործներուն նոյնացնել. կաշխատին զինաթափ ընել հայ ժողովուրդը Զօր-Մարզուանի մէջ և ամեն տեղ, ուր որ ինքնապաշտպանելու վիճակի մէջ է։

Այս իրողութիւնները հայ շրջանակներու մէջ ցաւալիօրէն զարմանք և ապշութիւն կը պատճառեն։ Մենք չենք կրնար անտարբեր մնալ, երբ կը տեսնենք որ այնքան սարսափելի նախճիրներէ, ամբողջ նահանգներ աւերաւերակ ընելէ և խուժանին ու անբան պաշտօնեաներու հրամանին տակ եղող զինուորներու կողմէն անպատմելի խժդժութիւններէ յետոյ, դարձեալ զոհերն են որ յանցաւոր կը դառնան և խստութեան կ'ենթարկուին։ Մեր ուրոյն պատասխանատուութիւնը պարտք կը դնէ մեր վրայ որ այս իրողութիւնը մատնանշենք Եւրոպայի հանրային կարծիքին։ Արդարադատ ու անաչառ օրինազանցումն է որ պիտի կրնայ խաղաղացնել երկիրը, ուժ տալ անոր և արգիլել նորանոր եղեռնագործութիւններ։

*) Այդ հեռագրի պարունակութիւնը հաղորդած էինք եւրոպական մամուլին։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑԱԳՆԱՊԸ

Թիֆլիս, 15 մայիս

Ծանր հարուածները, որոնք ամեն օր տեղում են հայութեան գլխին կովկասեան զանազան քաղաքներում, այլ ևս կասկածի տեղիք չեն տալիս, որ ռուս միապետութիւնը նորէն մի արտակարգ խաղ է սկսել մեր դժբախտ երկրում։

Երկու ամիս առաջ մի քանի ռուս լրագիրներ հրատարակեցին կովկասեան փոխարքայի ներկայացուցիչ Խարոն Նօլդէի կարծիքը Կովկասի և մասնաւորապէս հայերի ու Դաշնակցութեան մասին. այն, որ հակառակ մինչև իսկ Պետական Դումայի հոկտեմբերեան-աջակողմեան բանաձևին՝ Կովկասում ռէֆորմներ մտցնելու ժամանակը չէ հասել բնաւ. այն, որ այդ երկիրը դեռ հանգիստ չէ վերջնականապէս և հանգստութեան նշաններ տակաւին ցոյց չէ տալիս. այն, որ այդ երկրում գործում է Դաշնակցութեան պէս մի միջազգային (international) կուսակցութիւն, մի վիթխարի յեղափոխական մարմին, որի գլուխը բարձրանում է ամենուրեք—Թիւրքիա, Պարսկաստան—ուր կառավարութիւնները թուլանում են, և սկսում է կործանել տիրող կարգերը. վերջապէս այն, որ մինչև ուրեմն չը վերանայ Դաշնակցութիւնը, մինչև չ'ոչնչանայ իր սաղմի մէջ՝ Կովկասում անհնար է որևէ գործ սկսել ռէֆորմների և վերաշինութեան։

Այսպէս էր խօսում Նօլդէն, Կովկասեան „ազատամիտ" փոխարքայի „ազատամիտ" ներկայացուցիչը. նա, որի վրայ հիացած են Կովկասեան ազգերի պաշտօնական և վատասեռուած պատգամաւորները. նա, որ դեռ ևս նոյեմբերին Պետական Դումայում բոլորովին այլ ոգով և այլ տոնով էր խօսում նոյն խնդրի մասին, երբ հարկաւոր էր պաշտպանել Ծայրաջկողմեան յարձակումներից, իր անգոյն և թուլամորթ մեծաւորին։

Եւ ահա այսօր կարծես կամենում են իրականացնել այդ չարագուշակ և տմարդի սպառնալիքը։ Համատարած և մասսայական ձերբակալութիւններ ամենուրեք, բանտարկութիւններ Կովկասեան երկրի բոլոր անկիւններում և բոլոր խաւերի մէջ—ուսուցիչներ, վիպասաններ, բանաստեղծներ, հրապարակագիրներ, բժիշկներ, իրաւաբաններ, քահանաներ, արհեստաւորներ, գիւղացիներ, բանուորներ և մինչև իսկ վաճառականներ ու կապիտալիստներ։ Այսպէս է արտայայտւում ռուսական անիմաստ ու կարճատես քաղաքականութիւնը Կովկասում և մասնաւորապէս հայկական շրջաններում։ Հայ գրականութիւնը, մամուլը, դպրոցները, տնտեսական-արդիւնաբերական կեանքը—բոլորը զարնուած, քայքայուած, աւերուած են։ Բացի սրանից—ինչպէս մի քանի տեղ կարդացինք—դաւեր են կազմակերպւում նաև հայ կաթողիկոսական հաստատութեան և հայ եկեղեցական իրաւասութեան դէմ՝ մեր ժողովրդի այդ երկու դժբախտ և հինաւուրց ներկայացուցչական մարմինները աւելի ևս թուլացնելու, կազմալուծելու նպատակով։ Ստոր փորձանքներ են պատրաստւում նաև ժողովրդական

բազմաչարչար դպրոցների գլխին, որոնք ռուսական բըռնապետութեան համար միշտ եղել են անտանելի ու ինքնակար հիմնարկութիւններ և որոնք քանիցս անազնիւ խաղալիքի առարկայ են դարձել։ Այս դժբախտ նորութիւնների հետ միասին լուրեր են պտտում նաև որ կովկասեան վարչական համակարգը (système administratif) մի խոշոր փոփոխութիւն պիտի կրի, որ փոխարքայութիւնը պիտի վերանայ, որ Կովկասը պիտի բաժանուի երկու մասի՝ հիւսիսային (մեծամասնութիւնը ռուսներ) և հարաւային (հայեր, վրացիներ, թուրքեր)— առաջինը խաղաղ, հնազանդ, տիրասէր, երկրորդը ապըստամբ, ըմբոստ և յեղափոխական։ Մէկը իբր հարազատ որդի, պիտի կառավարուի պետական ընդհանուր օրէնքներով, միւսը իբր խորթ զաւակ, պիտի ապրի „զինուորական նահանգապետութեան“ կազմով։ Եւ այս բոլորը նրա համար, որպէսզի տեղական ազգաբնակութիւնը մշտական ահ ու սարսափի մէջ լինի, որպէսզի ռուսական բիրտ ոստիկանութիւնը միակ տէրը դառնայ քաղաքական դրութեան, որպէսզի ամեն բան կախուած լինի վայրագ ու արիւնռուշտ ժանդարմներից։

Յաւերժօրէն տխմար և մշտնջենական խմաստակ բիւրօկրատիան այս բարբարոս միջոցներով կամենում է ուժեղ հարուած հասցնել կովկասեան ժողովուրդների ազատ ու անկախ զարգացմանը, կամենում է արմատախիլ անել կովկասեան բարձունքներից ըմբոստութեան, պայքարի, ընդվզումի գեղեցիկ առաքինութիւնը...

Այդ յանցաւոր քաղաքականութիւնը առ այժմ գլխաւորապէս ուղղուած է հայ ժողովրդի դէմ՝ յանձին նրա ամենաառողջ, ամենաթարմ և կենսունակ մասի. մի տարբ, որ իր „անհանգիստ“ բնաւորութեամբ, իր մաքուր ու խանդավառ հայրենասիրութեամբ և իր գործօն մարդասիրութեամբ շարունակական մտահոգութեան մէջ է պահում ռուս միապետութեան շահերը։ Կովկասը և մանաւանդ հայ ժողովուրդը մի կատարեալ մղձաւանջ է դարձել նեարդոտ ու ջղայնացած միապետականների համար։ Նրանից է բղխում այդ վերին աստիճանի վատառողջ ու ցաւագար քաղաքականութիւնը։

Այս ծանր օրերին, հակաշարժումի (réaction) այս կատաղի ու կործանարար ընթացքի հանդէպ՝ կովկասեան մտաւորականութիւնից և առանձնապէս հայ մարտնչող ու խորհող երիտասարդութիւնից պահանջւում է վերջին ծայր ուշադիր վերաբերմունք դէպի մեր երկրի կեանքի ու մահուան այդ մեծ խնդիրը, ազատ և ուրոյն ապրումի այդ ողբերգական պրոբլեմը... Զգաստանալով և հսկելով հանդերձ մեր երկրի անձեռնմխելի իրաւունքների վրայ՝ հայ մտաւորականութիւնը պիտի աշխատի լաւ ըմբռնել երևոյթի ամբողջ էութիւնը։ Արդ. ի՞նչ է վերջնականապէս կամենում մեզնից ռուս կառավարութիւնը. յետոյ ռուս կեանքի ընդհանրապէս և կովկասեան երկրի պայմանները մասնաւորապէս այնպէ՞ս են արդեօք, որ նա կարողանայ յաջողութիւն ունենալ իր մտադրածի և ծրագրածի մէջ։

Միապետութեան ծրագիրն ու նպատակը պարզ է. քիչ առաջ ընդգծեցինք, որ նա դաւ է նիւթում կովկասեան երկրի ապահովութեան և ազատ զարգացման դէմ. դաւ է նիւթում գլխաւորապէս հայ ժողովրդի ամենանուիրական, ամենաարդար տենչանքների դէմ— ապրել իբր մարդ, ապրել իբր հայ, զարգանալ ազատութեան և արդարութեան մէջ։

Պիտի կարողանա՞յ արդեօք կեանքի մէջ գործադրել իր ծրագիրը։

Ահա՛ խնդիրը։

***

Կուել կովկասի դէմ՝ նշանակում է կուել յեղափոխութեան դէմ. աւելին՝ նշանակում է կուել ռամկավարական և պարլամենտական սկզբունքների դէմ. աւելին՝ նշանակում է կուել ամենատարրական սահմանադրութեան դէմ, այսինքն ինքն իր դէմ։ Սրանցից զատ՝ նշանակում է կուել մի ինքնասէր, ինքնագիտակից ու դիմացկուն ազգաբնակութեան դէմ։ Դա մի վերին աստիճանի անմիտ ու խելառ պայքար է՝ ուղղուած դէպի մի երկիր, որ պատմութեան ընթացքում ցոյց է տուել դիմադրութեան ահագին կարողութիւն, որ ապրելու, ապատօրէն և ինքնուրոյնաբար ապրելու ջերմ բաղձանքն ու պահանջներն ունի։ Ի՞նչ են ցոյց տալիս մինչև այժմ եղած բոլոր դառն փորձերը, պատմական փաստերի այնքան տխրահռչակ շարքը... Պասկևիչից սկսած մինչև վատահամբաւ Գոլիցին անդուլ և անդադար աշխատեցին այդ ճանապարհով. ի՞նչ շահեցին։ Կովկասեան ազգերի միահամուռ ատելութիւնն ու զայրոյթը։ Ի՞նչ արդիւնաւորեցին. տեղական ուժերի դիմադրական կարողութիւնը։ Հայ ամբողջ ազգաբնակութիւնը մի հատիկ մարդ դարձաւ և ծառացաւ խելակորոյս կառավարչապետի ու ռուսական զօրքերի առջև։ Թիւրքերին նետեցին հայերի վրայ, փոխադարձ թշնամանքի և հակառակութեան սերմեր ցանեցին կովկասեան ժողովուրդների միջև. ի՞նչ եղաւ հետևանքը. թուլացրի՞ն արդեօք ժողովրդի կորովը, արգելեցի՞ն արդեօք թիւրքերի ինքնագիտակցութեան զարթնումը...

Եւ մի՞թէ այսօր պայմաններն աւելի ձեռնտու են միապետութեան համար։ Ամենևին. Ռուսաստանը եապոնական կուից առաջ աւելի լաւ չէր քան յետոյ, նա աւելի լաւ չէր նաև 1904—1906 եղբայրասպան. արիւնահեղ թւականներին. նա աւելի լաւ չէ և այժմ. միշտ միևնոյնն է։ Ներքնապէս փտած ու այլասերուած։ Եւ, դժբախտաբար, այդ փտութիւնն ու այլասերումը հետզհետէ ոչ թէ բուժւում է, ոչ թէ վերանում, այլ աւելի ևս զարգանում ու առաջադիմում։ Դրամական վիճակը ծայրայեղօրէն զարնուած, մշտնջենական պարտքի մէջ, հինգ տարի տևող համատարած զինուորական դրութեամբ երկրի ամբողջ կարողութիւնը սպառած, ադմինիստրասիոնը անպէտքացած ու անբարոյացած, բովանդակ պաշտօնէութիւնը վատասերուած... Այս է ներկայացնում լայնածաւալ Ռուսաստանի ընդհանուր կացութիւնը ամենուրեք՝ սկսած Նեվայի ափերից մինչև Եապոնական ծովը։

Բուն երկրում դժգոհութիւնը, զայրոյթը ահագին է. հասարակութեան համարեա բոլոր խաւերը մի անդիմադրելի ատելութեամբ լցուած՝ պահպանում են վտանգաւոր, „չարագուշակ“, արհաւիրալի խաղաղութիւն, որ աւելի սարսափելի է գուցէ, քան աղմուկն ու շարժումը։

Գիւղացիութիւնը, բանւորութիւնը, արհեստաւորները, մանր բուրժուազիան, համալսարանները, ուսանողութիւնը, ամբողջ իսկական մտաւորականութիւնը, մինչև իսկ մեծ բուրժուազիան,—բոլորը բողոքող և ըմբոստ։ Մնացել են իսկական ռուս մարդկանց վոհմակները, աւազակներ, ոճրագործներ ու անգրագէտներ, որոնք նեարդոտ, հիւանդագին ցնցումներ են անում՝ պահպանելու համար բռնապետութեան խարխուլ ու աւերակ գահը։ Այսպէս է այնտեղ՝ Ռուսաստանի ներքին նահանգներում, այսպէս է նաև „խաղաղացած“ ու „հանգստացած“ Ծայրերում։

Կովկասի պայմաններն էլ միւս կողմից մխիթարական չեն ռուսական միապետութեան համար։ Վրացիները վաղուց գիտակցութեան մէջ են և չափազանց վատ տրամադրուած դէպի ապիկար կառավարութիւնը։ Թող այս վերջինը չխաբի բնաւ. հակառակ մի քանի գաղտփարավաճառ „հրապարակախօսների“, հակառակ ֆէօդալական այն սակաւաթիւ ու ողորմելի մնացորդների, որոնք ամեն կերպ խունկ են ծխում կենտրոնական իշխանութեան՝ վրաց ժողովուրդը իր ահագին զանգուածով դէմ է բռնապետական անորակելի սիստէմին։ Եւ այս դիմադրութիւնն ու հակառակութիւնը օրէցօր աւելի է ընդգծւում։ Գուրիայի արիւնոտ պատմութիւնը, իր լաւագոյն զաւակների անարդար և անիրաւ աքսորանքը, իր ներկայացուցիչների՝ Պետական Դումայի անդամների անտեղի բանտարկութիւնը, յուզիչ ու ողբերգական մահը և այլ շատ ուրիշ եղելութիւններ հաշտութեան ոչ մի հնարաւորութիւն չեն թողել։ Այսօր էլ ռուսական ներկայացուցչական բարձրագոյն ժողովում նստած Վրաստանի պատգամաւորներ՝ արժանաւոր յաջորդներ իրենց դժբախտացած և տաղանդաւոր հայրենակիցների՝ ամենից կրակոտ և ամենից ուժգին թափով են քննադատում քայքայուած և ախտաւոր ռուս բէժիմը։

Գալով Թուրքերին՝ վերջին հինգամեակը նրանց համար քաղաքական դաստիարակութեան և առողջ ինքնագիտակցութեան տարիներ էին։ Սկզբում կոյր գործիք նենգաւոր ու դաւադիր կառավարութեան ձեռքին՝ նրանք յետագայում սկսեցին հասկանալ իրենց հիմնական սխալը։ Կովկասի զանազան վայրերում և Ռուսաստանի հեռաւոր սահմաններում առաջ տարուող յեղափոխական շարժումը մի կողմից, իրենց քայքայուած, աւերակուած, հաւասարակշռութիւնը կորցրած տնտեսական կեանքի սգաւոր պատկերները իրար հետևանք հայ-թրքական անմիտ, խելագար ընդհարումների, միւս կողմից՝ եկան համոզելու մեր մահմեդական հարևաններին, որ կովկասեան ազգերի եղբայրական համերաշխութեան մէջ է գտնւում միայն նաև Թուրքերի անհատական-ազգային երջանկութիւնն ու ապահովութիւնը։ Նրանց պատգամաւորների համար ռուսական առաջին երկու Դումաները իսկական դպրոցներ հանդիսացան. այստեղ նրանք արտայայտեցին շատ աւելի պատուաւոր կերպով և շատ աւելի մարդկայնօրէն, քան քիչ առաջ արտայայտել էին կովկասեան զանազան քաղաքներում։ Կանգնելով միշտ ընդդիմադիր տարրերի շարքերում՝ նրանք չը վարանեցին նաև ստորագրել Մուրոմցեվի հետ միասին Վիբօրգի պատմական կոչը՝ նեռւած ընդդէմ ռուսական միապետութեան։ Այսպէս կամացուկ, բայց հաստատուն քայլերով մեր հարևանները առաջ էին գնում քաղաքական հասունութեան ճանապարհով, երբ Պարսկաստանում և Թուրքիայում, նրանց ցեղակից և կրօնակից այդ երկու արևելեան խոշոր երկիրներում, ծայր տուեց և յաղթանակեց ժողովրդապետական - ռամկավարական սկզբունքը, երբ երկու տեղում էլ խորտակուեց միապետական բացարձակ իշխանութիւնը՝ յանուն առաջադիմութեան, յանուն ժողովուրդների հաւասարութեան և ազատութեան։ Պատմական այս վերջին փաստերը ազդելով հանդերձ կովկասեան կեանքի վրայ առհասարակ՝ շատ բան փոփոխեցին նաև մեր հարևանների հոգեբանութեան ու աշխարհհայեացքի մէջ մասնաւորաբար։ Եւ դեռ անցած աշնանը, կովկասեան հարցի աղմկալի վիճաբանութեան ժամանակ, Պետական Դումայում Թուրք պատգամաւոր Հայդարովը արտասանեց մի նշանաւոր ճառ, որի մէջ ի միջի այլոց ասում էր մօտաւորապէս հետևեալը. „սրանից մի քանի տարի առաջ Կովկասում կատարուած շարժումներին մենք մասնակից չեղանք. մենք նոյնիսկ գործիք հանդիսացանք ռուս կառավարութեան ձեռքին և նետուեցինք մեր հարևանների վրայ։ Այսօր բարեբախտաբար անցել են այդ ժամանակները. մենք պիտի քաւենք մեր մեղքերը և իմացէք պարոններ — դիմելով աջակողմեաններին—որ մենք այսուհետև բարեկամներն ենք բոլոր յեղափոխականների և միշտ պիտի քալենք ապագայի յեղափոխութեան առանձին շարքերում“... Կովկասեան Թուրք պատգամաւորի այս խօսքերը ինչ որ էլ չ՚ապացուցանեն, ապացուցանում են այնուամենայնիւ այն զգալի փոփոխութիւնը, որ կատարել է մահմեդական զանգուածի մէջ յանուն ժողովուրդների ազատութեան և ընդդէմ բռնակալութեան տիրապետութեան...

Վրացիներից և Թուրքերից ցած չէ կանգնած յամենայն դէպս Կովկասի հայ ժողովուրդը իր քաղաքական ըմբռնումով ու հասարակական ինքնագիտակցութեամբ։ Ցարիներ շարունակ ամենավատթար պայմանների մէջ հարկադրուած լինելով իր գոյութիւնը շարունակել՝ նա աջողել է ձեռք բերել հասունութեան, կամքի ու գործելակերպի մի պատկառելի կարողութիւն. կարողացել է իր միջից արտադրել, վեր հանել խելացաս, կամքոտ ու կորովի հասարակական գործիչների մի թիւ, որ գիտէ, հասկանում է մեր ժողովրդի հոգեբանութիւնը և նրան շրջապատող պայմանները, որ օժտուած է անդիմադրելի կամեցողութեամբ և որ ընդունակ է հաւաքական արդարութեան համար զոհաբերել իր անհատականը։ Յեղափոխականների այդ խաւը այնքան էլ սակաւաթիւ ու ցանցառ չէ, որպէսզի հնարաւոր լինի թէկուզ ամենախիստ միջոցներով ոչնչացնել այն։ Հայրենիքի ամենահեռաւոր, ամենախուլ խորշերումն է երևացել, ստեղծագործուել, սննդուել այդ բացառիկ ուժը և որպէսզի նա ոչնչանայ, պէտք է որ ինքը հայ ժողովուրդը ոչնչանայ։ Կովկասեան կառավարութիւնը այս բոլորը պէտք է լաւ հասկանայ։ Սկսած Երևանի Նուաճման թուականից մինչև այսօր, աւելի քան 80 տարի, նա յարատև շփման մէջ է այդ ժողովրդի հետ. նա յաւերժօրէն դաւադրութիւններ է սարքում այդ փոքրիկ քաղաքակիրթ համայնքի գոյութեան դէմ։ Եւ միթէ՞ այսքան երկար տարիների ըն-

թացքում, այնքան եղելութիւններից, այնքան տխուր փորձերից յետոյ չկարողացա՞ւ համոզուել, որ հայ ժողովուրդը բնաւ չի կամենայ իր ամենաբուռն, ամենահրամայական ցանկութիւնները թաղել անյայտութեան խաւարում։ Չէ՞ որ պատմութիւնը բարեբախտաբար չէ մեռնում բռնակալների հետ միասին. չէ՞ որ նա կանգուն է միշտ և կարող է ուսուցանել յաւիտեան...

Այսպէս. կովկասեան ազգերի և նրանց մէջ հայերի քաղաքական փորձառութիւնը, հոգեկան կորովը, ազատութեան ձգտումը ոչ թէ չէ նուազել, այլ կրկնապատկուել է ու աւելի հարկադրական դարձել։ Բոլոր գործունեայ դասակարգերը, նրանք, որոնք տնօրինում են և ղեկավարում հասարակական շարժումները՝ մի գեղագոյն զայրոյթ են տածում դէպի ռուսական քաղաքականութիւնը։ Գիւղացիութիւնը կրկնակի բեռներ շալակած՝ շատ լաւ գիտէ, որ իր թշուառութեան մի ահագին մասը բղխում է միապետական կառավարութիւնից. բանւորութիւնը, որ այսօր հազիւ է կարողանում տեղաւորուել որևէ գործարանում, աւելի քան գիտակցում է, ճանաչում իր ներկայ հակառակորդին։ Ռուսական պետութեան այդ բարբարոս, ասիական ձևը տեղ չէ թողել մեր գեղեցիկ հայրենիքում, որ չը հարուածէ, չը վիրաւորէ...

Պետական Դուման կոչուած ծաղրանկարը, մեծ հողատէրերի, աւատների այդ միջնադարեան հաւաքումը կամ պէտք է ժողովրդապետական հաստատութիւն դառնայ, կամ թէ պէտք է ոչնչանայ։ Քսաներորդ դարում եւրոպական պետութեան յաւակնութիւններն ունեցող մի երկիր չի կարող կառավարուել ֆէոդալական հինաւուրց վարչաձևով։ Ռուսաստանի մտաւոր, պատմական, աշխարհագրական, տնտեսական, արդիւնաբերական հասարակական պայմանները չեն կարող այդքան գռեհիկ հակասութեան մէջ լինել նրա քաղաքական կազմի հետ։ Այն ժամանակ, երբ արևելեան երկրները, մինչև իսկ պառաւ Չինաստանը կամենում են դուրս գալ թագաւորի „աստուածային իրաւունքի“ հեքիաթական սահմաններից՝ Նեվայի ափերում անհնարին է դառնում միապետութեան բացարձակ իշխանութիւնը։ Պատմութիւնը այդքան ցայտուն անախրոնիզմ (ժամանակավրէպ) չի կարող հանդուրժել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՒԱԾ

Շահը յուսախաբ իր ազգադաւութիւններուն մէջ՝ վերադարձուց սահմանադրութիւնը իր ժողովրդին՝ որուն դէմ երկու տարիէ ի վեր անազնիւ ու անիմաստ պայքարը կը մղէր։ Երկու բռնակալներ, որոնց գոյութեան արմատները ոճիրի և նենգամտութեան մէջ թաղուած էին, Ապդիւլ Համիդ և Մէհմեդ Ալի Շահ, միաժամանակ կը գլորին ազատութեան կռուփներուն տակ, և Ասիան, մի ադէմ ու տրժգոյն, դարերու կուռքերը կը տապալէ և կսկսի նոր շունչ ծծել։ Մեծ Պանը կը մեռնի...

Մօտ տարի ու կէս է, երբ պարսից Շահը երդմնադրուժ՝ ռմբակոծեց Պահարիստանի պալատը (1908 յունուար 3) և գլխատեց Սահմանադրութիւնը անողոք և աւազակաբարոյ վրէժխնդրութիւնով մը։ Այդ րոպէին արդէն երկիրը մատնուած էր անխիղճ կամայականութիւններու ու անիշխանութեան, և անշէջ ատելութիւններու, միանգամայն սկսած էր ազատութեան ու դաժան բռնակալութեան մշտանորոգ մարտնչումը։ Մազդէականութեան խաւարի ու լոյսի կռիւն էր։

Սոյն չարաղէտ ոճիրը ժողովրդական ազատագրութեան դէմ, մղձաւանջ մը եղաւ նաև Շահին, որ եսապաշտ զարհուրանքէ մը լլուկ՝ փակուեցաւ իր ամրոց-պալատին մէջ և ինչպէս Աբդիւլ Համիդ, ահ ու սարսափի քաղաքականութիւնը գործադրեց։ Սա միահեծանութիւնն էր որ իր վերջին և յուսահատ ճիգը կը թափէր փրկելու համար իր գահին պատուանդանը...

Շահին ընդդիմութիւնը կառավարական սկզբունքէ մը չէր բխեր, այլ աւանդութենէ մը, որ կ'առաջնորդուի սանձարձակ կամայականութիւններէ և մարդկային գոյութեան վրայ անասնային և նախամարդկային մտածումէ... Մէհմեդ Ալի Շահ չէր այն լուսամիտ բռնակալը՝ որ զգալով իր երկրին յետադէմ վիճակը, կը ջանայ երկաթէ ձեռքով ու ժողովրդասէր ոգով ուղղութիւն տալ անոր և ընտանեցնել քաղաքակրթութեան պայմաններուն։ Այդպիսի մտածում մը հեռի էր նոր Շահէն, որուն իդէալը եղած է յղփանալ ու շուայտանալ. ան երբէք չհանդուրժեց որ Մէճլիսը սահման մը դնէ ազգային հարստութեան իր վայրավատնումներուն և իր ապերասան քմահաճոյքներուն։

Շահին այդ կիսաբարբարոս հոգեբանութեան մէջ, Ռուսիա նպաստաւոր հող և վիճակ գտաւ իր քաղաքական նպատակին համար, և զարկ տուաւ անոր կոյր և վատ հակումներուն, միւս կողմէ խրախուսեց բոլոր այն ջոլիրը, որ մեծաշող „լագապ“ներ կը կրեն՝ „սալթանէ“ներ, „դօվլէ“ներ, „մոլէ“ներ և ևն, որ դարերով իրենց ժողովրդին արիւնը ծծած ու հողի հաւասար ըրած են։

Բարեբախտաբար Շահը ու Պահատուր ճէնկերը, չկրցան իրենց մուրատին հասնիլ, և Իրանը ուր գիտակցութեան կայծերը սկսած էին ճարճատիլ, ընդվզեցաւ գնահատելի արժանապատուութիւնով մը, որ պատիւ կը բերէ իրեն։

Թէպրիզը ռազմաբերդը եղաւ այդ ըմբոստ ոգիին, այն օրէն ի վեր երբ Շահը՝ պապենական դաւաճան աւանդութիւնով մը, հեռամուտ եղաւ ոչնչացնել Պարսկաստանի ազատական դէմքերը։ Թէպրիզի հերոսական դիմադրութիւնը Պարսկաստանի պատմութեան ամենաշքեղ դրուագներէն է։ Բուռ մը քաջեր հպարտ ազատութեան սիրով, անպարտելիօրէն ետ մղեցին Շահի լեշկերները ու վարձկան „ղրի“ներու վոհմակը։ Եթէ Ատրպատականի մայրաքաղաքը չկրցաւ վճռական հարուածը տալ բռնապետութեան բանակին, բայց կրցաւ, երկարատև ու անընկճելի դիմադրութիւնով հիացում ազդել ու բարձր պահել պարսիկ ժողովրդի մէջ Ազատութեան իդէալի մը հաւատը և լաւագոյն օրերու յոյսը։ Այդ յամառ և անձնուէր ոգորումն էր որ արձագանք գտաւ երկրին ամեն կողմը և յեղափոխական գունդեր հանեց անոր մոխիրներէն։

Հայերը, որոնց գոյութեան հետ կապ ունի ոևէ քաղաքական ու հասարակական յեղաշրջում այդ վայրերուն մէջ, չէին կրնար, բնականաբար, անտարբեր մնալ այդպիսի պայքարի մը որ մտքի և սրտի կը խօսի միանգամայն։ Անոնք, ինչպէս ամեն ազատական ու մարդասէր շարժումներու, նետուեցան արիւնոտ դաշտը, ուր իրենց կսպասէր մարտիրոսութեան պսակը, և իրենց մտքի ու բազուկի վճռականութեան բաժինը բերին, նոյնքան արիասիրտ, որքան անշահախնդիր ոգով, Թէպրիզի յեղափոխական շարժման։ Անոնք աղը եղան իդէալական խոյանքներուն ու համեստ մարտիկները մարտնչող տառապանքին ու ստրկութեան։ Պարսիկ յեղափոխականները իրենք առաջինը կը հանդիսանան խոստովանելու հայերու դերը Իրանի ազատագրական պատմութեան մէջ։ Թէպրիզի բարձունքներուն վրայ և այլուր հայ կորիճները անվեհեր քաջութեան հրաշքներ գործեցին ու նահատակուեցան փառքով, անոնց վրայ „Կիւլիստանի“ անթառամ վարդերը պէտք է սփռել։ Կասպից ծովէն մինչև Ուրմիա, հայ յեղափոխականներու շուքն է որ կ'ընկերանայ պարսիկ խումբերուն։ Ազատութեան կրօնը կեղբայրացներ այդ երկու հակակրօն տարրերը, որ դարերով իրար ատել սորված էին տգէտ ստրկութեան մէջ։

Մայիս 4-ին Եփրեմը 60 կտրիճներով կը գրաւէ Ղազվինը և գերի կը բռնէ կառավարիչը և 1000 զինուոր։ Ղազվինի առումով՝ Թէհրանը և Շահը յեղափոխական հարուածին տակ կ'իյնային արդէն։

Ամեն կողմէ Շահին մահացու հարուածներ կը տեղան, բայց Մէհմէդ Ալի Շահ, չէր ուզեր զիջանիլ, Ռուսիան իր ետևն էր ու կը սրատապդէր զինքը։

Շահի անմիտ ամբարտաւանութիւնը, որ չէր ուզեր խոնարհիլ ժողովրդական առիւծի առջև, պատրաստ էր երկրի քաղաքական գոյութիւնը վտանգել, թէկուզ Ռուսիան գար գրաւէր։ Սա գռեհիկ վրէժխնդրութիւնն էր վեհապետի մը կողմէ զոր պատմութիւնը չկրնար արդարացնել։ Երկու միւսիւլման և ժամանակակից վեհապետներ, մէկը Վոսֆորի ափին, միւսը Ցէմավէնտի ստորոտը, նոյն անարժան գգացումը ունեցած են, ցոյց տալով որ իրենց և իրենց ժողովուրդներուն մէջ ոչ մէկ համակրական կապ չկար։

Մէհմէդ Ալի Շահ, իր անել և յամառ վիճակէն դուրս գալու համար, քանիցս փորձեց պարսիկ ժողովրդի մոլեռանդութիւնը գրգռել յայտարարելով որ „սահմանադրութիւնը թշնամի է Էէրիաթին“, այսպէս քաղաքական հարցը կրօնականի փոխել կուզէր. այդ քայլը արձագանգ չգտաւ։

Քանի մը անգամ խոստացաւ Սահմանադրութիւնը վերահաստատել, բայց իր ուզած ձևով. Ջանաց յետադիմականներէ „կայսերական խորհուրդ“ մը կազմել Մէճլիսը փոխարինելու համար, այս բոլոր խաբեբայութիւններ էին և ժողովրդին կողմէ ոչ մէկ ընդունելութիւն չգտան, այնպէս որ Շահը իր անվերջ ստախօսութիւններուն ու խուսափողական միջոցներուն պատճառով, „նենգամիտ“ տիտղոսը ստացաւ։ Ժողովրդին ազատական ուժը „Գանունը Էսասի“ կը պահանջէր և ոչ կեղծ ու կիսատ միջոցներ։

Երբ այսպէս անարդ կերպով Մէհմէդ Ալի Շահ պարսիկ ժողովրդի ճակատագրին հետ կը խաղար, Յեղափոխութիւնը կսկսէր թափ առնել ու հզօրանալ։ Ի զուր դեսպաններ կը յղդրդրէին զայն որ „Մէճլիս“ գումարէ, Շահը կը մտաբերէր խեղդել յեղափոխութիւնը իր ափ մը վարձկաններով և այդ բողքի ու յամառութեան տեսարանը զուեշտային կերպարանք մը առած էր։ Ցնտեսական տագնապը, որուն մէջ կը տապլտկէր Իրանի վեհապետը և չէր կրնար ոչ մէկ փոխառութիւն կնքել, թոյլ չէր տար իրեն աւելի ուժ հանելու յեղափոխական շարժման դէմ։ Իր զօրքերը ալանթալանով ու կողոպուտով կապրէին. սա կռիւ չէր, այլ բարբարոս հօրդաներու տեսարաններ։

Ի վերջոյ յաջողեցաւ Թէպրիզը սովի ենթարկել՝ հաղորդակցութեան միակ ճամբան, Ջուղայի գիծը կտրելով, ուրկէ քաղաքը պաշար կը մտնէր։ Քաղաքին ընտեսական վիճակը տագնապալից դարձաւ, օտարահպատակներու դրութիւնը մանաւորապէս մեծ աղմուկ հանեց, ռուսական մամուլը ուժ կուտար՝ ամեն ինչ չափազանցելով ու խեղաթիւրելով և ցոյց տալով մոտալուտ վտանգ մը օտարահպատակներուն. սա նախերգանքն էր ռուսական միջամտութեան ճամբաները հորդելու համար։

Շահը հիւպատոսներու դիմումին վրայ վեց օր զինադադար շնորհեց՝ որ պաշար մտնէ քաղաք, բայց Էմ Ցօվլէ չկատարեց անշուշտ Շահի գաղտնի հրամանին վրայ։

Թէպրիզի յեղափոխականները կզգային որ միջամտութեան հոտ սկսած էր բուրել հիւպատոսարաններէն։ Մեծ ժողովի մը մէջ շատեր՝ անձնուէր զոհաբերութիւնով մը՝ իրենց ունեցածին մինչև կէսը կը տրամադրէին սովամահ դրութիւնը փրկելու և պայքարը շարունակելու համար։ Դիմում եղաւ հիւպատոսներուն, որ եթէ կուզեն իրենց հպատակները հեռացնեն, քանի որ վտանգ կը նշմարէին,—„Մեր կառավարութիւնները գիտեն“, կը պատասխանէին միաբերան երկու հիւպատոսները։ Էնճումէնը Շահին կը հեռագրէ և կը պարզէ իրերու վիճակը և օտար միջամտութիւն, հրման կուգայ բանալ ճամբաները, բայց ուշ էր. ռուսական զօրքը Ռուպիկոնը—Արաքսը—անցած էր արդէն և մտած Պարսկաստանի հողը (ապրիլ 26—27)։ Ռուսիան այդ րոպէին կակնկալէր, և ինչ ալ բլլար պիտի չուզեր փախցնել առիթը։ Ի զուր Էնճումէնը կը բողոքէ յայտնելով որ ճամբաները բացուած են և թէ քաղաքը վտանգէ զերծ բլլալով աւելորդ է զօրքերու մուտքը։ Ոչ ոք մտիկ կ'ընէր։

Ցայտնի է որ Շահի տխմար դիմադրութիւնն էր որ այդ փորձան ը հրաւիրեց երկրին վրայ։ Ռուս դիւանագիտութիւնը իրերուն այնպիսի ընթացք մը և ռուս մամուլին այնպիսի ստայոդ և հակոտնեայ լուրեր տարածել տուաւ որ միջամտութիւնը անխուսափելի ըլլաւ, մինչդեռ հաւաստի իրողութիւնները կուգան հաստատել որ ռուսական միջամտութիւնը շատ վաղահաս էր և անտեղի։

Ապրիլ 22-ին անգլօ-ռուս նոր „կարգադրութիւնով մը, որ կը բղխէր, իբր թէ, 1907-ի պայմանագրութենէն, միջամտութեան պատահականութիւնը ընդունուած էր օտարականներու ապահովութեան համար եթէ Շահը յամառէր Մէճլիսը չգումարել։ Անգլիական տեսակէտով ռուս բանակը Թէպրիզ պիտի մտնէր „երբ բացարձակ պէտք զգացուէր, և թէ զօր. Սնարոքի խոյս պիտի տար պարսիկ ժողովրդի դիւրազգածութիւնը արթնցնելէ զօրքերու անօգուտ ցուցադրութիւնով մը“։

Իսկ Ռուսիա իր քաղաքական յանդուգն քայլը արդարացնելու համար, կանխօրօք կ'իմացնէր տերութիւններուն որ „միջամտութիւնը անհրաժեշտ է“ և թէ „ապահովութիւնը վերահաստատելէ յետոյ ռուս բանակը ետ պիտի կանչուի“։

Անգլիոյ արտ. գործոց նախարարը բրիտանական ժողովրդին կասկածը փարատելու համար կ'ըսէր, „ռուսական առաջխաղացութիւնը Թէպրիզի վրայ, օտարահպատակներու ինչքը և կեանքը պահպանելու համար է, այս պայմանով միայն Անգլիա կ'աջակցէր Ռուսիոյ“։

Սակայն Անգլիա լաւատեղեակ բլլալու էր որ օտարականներուն վտանգ չկար պարսիկ ժողովրդին կողմէ, ընդհակառակը Daily Chronicle-ի թղթակցին Մուրի և ամերիկեան միսիոնարական դպրոցի տնօրէնին պր. Պասքերվիլի յեղափոխական շարքերուն գլուխը անցնիլը, ուր Պասքերվիլ կուրծքէն հերոսի մահով մեռաւ ապրիլ 20-ին, հաւաստիք մըն էին թէ որքան փոխադարձ համակրութիւն կար երկու տարրերուն միջև։ Էդ. Կրէյ քաղաքական կեղծիք մը կը ջատագովէր. նկատի ունենալով միջազգային մռայլ կացութիւնը և անգլօ-գերման յարաբերութեանց սուր բնոյթը, Անգլիոյ արտ. գործոց նախարարը գել մը կուտար իր ասիական հմայքին Ռուսիան սիրաշահելու համար։ Իսկ Ռուսիան շնականօրէն կը ձգտէր շահագործել Անգլիոյ այդ վարանոտ տրամադրութիւնը՝ Ռուրպատակի մէջ Մանչուրիի պարտութեան „փոխվրէժը“ պատրաստելով։

Անգլիական մամուլը որքան որ „անխուսափելի“ կը նկատէ այդ միջամտութիւնը, կը վախնայ սակայն որ մի գուցէ Ռուսիան Ռուրպատակը նոր Եգիպտոս մ'ընէ զայն ընդմիշտ գրաւելով։

Ահաւասիկ, ըստ ռուս լրագիրներուն, անգլօ-ռուս համաձայնութեան պայմանները Շահին հետ.

1) Շահը անփոփոխ կը պահէ Սահմանադրութիւնը և ընդհ. ներուժ կը շնորհէ։

2) Պարսկաստանի ֆինանսական բոլոր գործերը կը գտնուին Անգլիոյ և Ռուսիոյ հսկողութեան ու կնտրօլին տակ։

3) Սատրազամ և մինիստրը նշանակելէ առաջ կը հաստատուին Անգլիոյ և Ռուսիոյ կողմէն և ապա կը նշանակուին Շահի կողմէ։

4) Նոր իրաւունքներ չեն տրուիր ոչ սքի, նոյնիսկ ժողովրդին՝ առանց երկու պետութեանց գիտութեան։

5) Առանց Ռուսիոյ ու Անգլիոյ թոյլատրութեան Պարսկաստանը չկրնար նոր փոխառութիւն ընել ոևէ պետութենէ։

Ատոր փոխարէն Ռուսիա և Անգլիա պարտաւորութիւն կստանձնեն 1) Շահին կեանքը, ինչքը, թագը ապահովել, 2) Խաչոր փոխառութիւն ընել Պարսկաստանին, 3) Շահը պաշտպանել ժողովրդին կողմէն ոևէ բռնութեան դէմ։

Ռուս զօրքը ապրիլ 29-ին կը հասնէր Թէպրիզի առջև. իսկ 30-ին փոքրիկ խումբ մը կը մտնէր քաղաք... հիւպատոսարանները և օտարները պաշտպանելու համար, որոնց ոչ մէկ վտանգ չէր սպառնար։

Ռուսներու միջամտութիւնը այն րոպէին, երբ Սպահանը, Ղազվինը, Ռաշտը սկսեր էին սպառնալ և Թէպրիզը ուժ

կզգար դիմադրելու, հակառակ սովին, վհատում առաջ բերաւ յեղափոխական շարքերուն մէջ։

Ռուսներու մուտքը, ինչպէս կը գրէ մեր թղթակիցը, անակնկալ չէր, յաճախ կը խօսուէր այդ մասին ժողովրդին մէջ. բայց յեղափոխականները կսպասէին միայն երբ միապետականները յաղթէին որպէսզի անոնք ներս մտնէին իբր փրկարարներ և ազատէին ժողովուրդը վայրենի հօրդաներու վայրագութիւններէն։ Երբ այդ յոյսը ուշացաւ, ռուսները մէջտեղ նետեցին „վտանգը“ որ իբր թէ կախուած էր ռուսներու գլխուն, մանաւանդ երբ ռուս հիւպատոսարանի վրայ սկսան դիրքեր շինել, ամենքը սկսան լուրջ մտատանջութեան մէջ իմնալ այս անտեղի պատրաստութիւններէն։ Ինճու�մէնին բոլոր հաւատումները ապարդիւն անցան, պատրաստակամ բռնելով Շահի խուսափողական ընթացքը, անհրաժեշտ գտան ռուսական զօրք մտցնել... և „պատժել“ Շահի կամակորութիւնը։

Այժմ որոշ յայտնի կը լլլայ որ ռուսներու ներս մտնելը որոշուած է եղեր, խնդիրը միայն ձևի և պարագաներու մէջ կը կայանար։

Ռուսները քաղաքը մտնելէն ի վեր տեր ու տիրական են դարձեալ. և կը կարգադրեն ու կը նեն ամեն ինչ և կը հեռագրեն իրենց ուզած ձևով։

Միևնոյն օրը Շահը, թերևս այն համոզումով որ ռուս բանակը եկած է իր բացարձակ իշխանութիւնը վերահաստատելու համար, իր հօրեղբայրը, Նայիպ էս Սալթանէն, ամենայետադիմական մէկը, նախարարապետ կարգեց։ Զոյգ դեսպանները բողոքեցին այդ անուանումին դէմ։

Մէհմէդ Ալի Շահ յուսախաբ և Կայէնի իր արարքէն ամօթահար, որ մեղակից եղած էր ռուսական միջամտութեան իր անձնական արիւնարբու նկատումներուն զոհելով հայրենիքը, ակամայ տեղի տուաւ և կազմեց նախարարութիւն մը։

Իսկ մայիս 6-ին մասնաւոր հրովարտակով կը վերահաստատէր սահմանադրութիւնը, կը յայտարարէր ընտրական նոր օրէնքի մը պատրաստութիւնը և Մէճլիսի գումարումը յուլիսի վերջերը։

Թէհրանի մէջ կազմուած է 21 հոգիէ յանձնախումբ մը, որ պաշտօն ունի ընտրական նոր օրէնքը շուտով մշակելու և կիրառելու, իսկ Սահմանադրութիւնը պիտի պահէ իր նախկին նկարագիրը։

Իսկ նախարարաց խորհուրդը կոչ մը ուղղելով երկրին, կը հրաւիրէ ժողովուրդը հանդարտութեան, կ'արգիլէ զէնք կրելը և կը կազմէ զինուորական ատեաններ պատժելու համար խռովարարները։

Պարսիկ ժողովուրդը, առանց դաւաճանելու իր զգացումին և „պէտանամ“ անունը կրելու, չէր կրնար չբողոքել օտար միջամտութեան դէմ։ Խօրասանի էնճումէնը ռուսական Տումայի նախագահին հեռագրով բողոքեց ռուս արշաւանքին դէմ իբր հակառակ „անմիջամտութեան սկզբունքին“։ Դժգոհութիւնը ընդհանուր է, բայց պարսիկ ժողովուրդը դժբախտաբար, հայրենասիրական մեծ ժէտտ մը ընելու վիճակի մէջ չէ, իր բողոքը պլատոնական և միջազգային իրաւունքներու տեսական սահմանը չանցնիր, որուն միայն իրաւարարը ազգային ուժն է։

Թէպրիզի յեղափոխականներուն համար մասնաւորապէս ծանր էր և անմարսելի Ռուսիայի ընթացքը։ Դառն է և վշտալի տեսնել օտարը այն նեիրական հողին վրայ, ուր այնքան հերոսական ջանքեր ու արիւն թափուած էին։ Դրժուար է և անհանդուրժելի մեկ բռնակալի լուծէն ազատելով ցարիզմի լուծին տակ իյնալ։ Այնպէս որ անոնց զայրոյթը և վրդովմունքը շատ բնական և արդարացի էր Շահին ու իր դրուժան խորհրդականներուն դէմ որ երկիրը մատնեցին, ուստի իրենց բուռն ու ցաւոտ բողոքը հեռագրեցին Շահին, օտար միջամտութեան դէմ. Շահը ի պատասխան, կը ջանայ չքմեղել ինքզինք և մեղքը ձգել Էմ Տօվլէի վրայ որ չէր կատարած իր հրամանը։

Պարսիկ յեղափոխականներուն մէջ հայրենասիրական զգացումը հայրենիքի վտանգին առջև, սրտառուչ արտայայտութիւններ ունեցաւ։ Երբ ռուսական միջամտութիւնը ակներև կը թուէր շատեր առաջարկեցին „անձնատուր ըլլալ Շահին։ քան թոյլ տալ որ ռուսները գան գրաւեն պարսից հողը“։ Այսպիսի գեղեցիկ զգացումներով օժտուած տարր մը, ունենալու էր այս բոպէին արժանաւոր կառավարութիւն մը։ Մէհմէդ Ալի Շահ, յաւ է ըսել, ստոր կիրքերով, վրէժխնդրութեան հակումներով միայն պատասխանած էր ժողովրդի ազնիւ իղձերուն ու ձգտումներուն։

Թէպրիզը այժմ խաղաղ է, ճամբաները բացուած։ Բայց որքան անշուք է ու դժգոյն այդ խաղաղութիւնը, երբ Ազատութեան հերոսները իրենց յաղթութեան դաշտերուն վրայ օտար վրաններ կը տեսնեն. երբ Իրանի սոխակներ պիտի չդայլայլեն վարդագոյն Ազատութիւնը։ Ռուսական հրամանատարը գացեր ծալլեր է Ատրպատականի մայրաքաղաքին մէջ, սկսած է զինաթափ ընել ժողովուրդը և քանդել ռազմագիրքերը։

Սնարսքի կը ձգտի զգացնել Թէպրիզի ժողովրդին ռուսական կոպիտ ազդեցութիւնը և թաքուն նպատակը։ Ռուս պաշտօնեայի մը վերաւորուելուն առթիւ, անարդարօրէն 10,000 թումման տուգանք խլեց ժողովրդէն։ „Ռէչ“ հաւանական կը նկատէ որ ռուս զօրքերը պարսիկ կանանց ձեռք դպցուցած ըլլան ուրկէ գրգռուած՝ վիրաւորուած ըլլան ռուս զօրական մը։ Մասնաւոր և օտար աղբիւրներ կը հաստատեն որ ռուս կօզակները շատ անփափկանկատ կը վարուին՝ կանանց հետևելով ու անոնց լաչակները բանալով և նոյնիսկ տուները մտնելով։ Պարսիկներու ընտանեկան ու կրօնական զգացումը խիստ վիրաւորուած է ռուս զօրքերու ընթացքէն։ Սնարսքի, նկատելով երևի այն վատ տպաւորութիւնը որ կարող է առաջ բերել իր... քաղաքակրթիչ բանակին վարմունքը, հրամայեր է զօրքերուն պատշաճութիւնով վարուիլ ժողովրդին հետ։ Ժողովուրդը հանդարտ է և ամեն կերպով խոյս կուտայ ռուս քաղաքական ինտրիկներուն պատրուակի առիթ տալէ, բայց ինչո՞ւ չխորհիլ թէ Բէլասուարի հերոսը, կարող է վաղը այնպիսի միջադէպեր ստեղծել որ Ռուսիան „անպայման“ կերպով յետաձգէ իր զօրքերուն ետկանչումը։ Սնարսքի ոչ միայն զինուորական, այլ և այդ քաղաքական պաշտօն ունի։ Թէպրիզի մեր թղթակիցը հետևեալ շահեկան տեղեկութիւնները կը հաղորդէ մեզի.

„Մայիս 12-ին զօր. Սնարսքի գաղտնի „բրիքազով“ (հրամանագիր) կը հրամայէ իր սպաներին խլել ուր որ զէնք տեսնեն կամ գտնեն։ Երբ դիմադրութիւն ըլլայ ոևէ տունէ մը, կ'ըսէ, շրջապատել այդ տունը, ծերերը, կիները ու երախաները դուրս հանել, միացածները ձերբակալել և տունը թնդանօթով հիմնայատակ ընել։ Շատ պինդ պաշտպանել հայկական թաղը ու դրամատունը“։

Սնարսքի ոչինչէն կուզէ բան ստեղծել։ Սոյն նպատակաւոր կոչը իր մէջ կը գրկէ արդէն գրգռումի նենգամիտ սերմը։ Երբ պարսիկները ոևէ առիթ չեն մտածեր տալ, և ոչ ալ հայերուն դէմ մասնաւոր ատելութիւն կը սնուցանեն, քանի որ իրենց աչքովը տեսան անոնց հիանալի անձնուիրութիւնը, Ռուսիա, իր քաղաքական նպատակի իրագործման համար, հողը կը պատրաստէ և թերևս հայերը դարձեալ քաւութեան նոխազը ըլլան բռնազբօսիկ խլրտումներու։ Ռուսական ռուբլիները կարող են քանի մը խելագարներ մէջտեղ հանել և դրութիւնը կնճռոտել։ Հայ ժողովուրդը, մենք յոյս ունինք, որ չ'իյնար այս անգամ ռուս քաղաքականութեան թակարդը և դաւաճանել պարսիկ ժողովրդին, որուն ազատութեան պայքարին մատաղ բրաւ կտրիճներու լեգէոն մը և որուն հետ կարող է քովքովի ապրիլ և յառաջդիմել եղբայրական հաւասարութիւնով մը։

Ոմանք կը կարծեն թէ ռուսական այդ արշաւանքը ցոյց մըն է Թիւրքիոյ դէմ՝ որ իբր թէ յաւակնութիւններ ունէր Ատրպատականը գրաւելու։ Ինչ ալ ըլլայ Ռուսիոյ այդ քայլը կարող է անդրադառնալ միջազգային կացութեան վրայ և թերևս Գերմանիա պիտի աշխատի գժտութեան խնձոր մ'ընել Անգլիոյ և Ռուսիոյ միջև։

Շահը, նոր նախարարութիւն կազմելէ յետոյ, ուր կերևան ականաւոր և ազատական դէմքեր, Շահպաղի պալատէն քաշուած է Սալթանապոտ։ Այժմ ան կը մտածէ իր կաշին փրկել, ինչպէս սուլթան Համիդ, որուն հնարամտութիւն-

ները կը կապկեր և որուն չարաչար անկումը մեծապէս ազդեց իր վրայ և ղգաց միանգամայն ժողովրդական ուժին անպարտելիութիւնը։

Պարսիկ յեղափոխականներուն մէկ մասը անպայման Շահին գահընկեցութիւնը կը պահանջէ և չուզեր ոչ մէկ հաւատ ընծայել անոր խոստումներուն, իբր խաբեբայ և գաւաճան. կը պահանջէ նաև արտաքսումը և նոյնիսկ պատժումը անոր անխիղճ և յետադիմական խորհրդականներուն և արձակումը անկանոն զօրքերուն։

Նոյնիսկ Թէպրիզի առումէն յետոյ՝ յեղափոխականը գունդերը հարաւէն և հիւսիսէն կը պատրաստուին գրոհ տալ Թէհրանի վրայ բռնակալութիւնը իր որջին մէջ խեղդելու համար, ուստի ազդարարութիւնը միայն կեցուց այդ թափը։

Շահը երթալով առարկայ կը դառնայ ժողովրդական ատելութեան. բէակսիոնի մը երկիւղը մտքերը միշտ լարած կը պահէ, մանաւանդ որ Մէհմէտ Ալի չդադրիր դաւադրելէ և իր ցանկութիւնն է որ ռուսները Թէհրան ալ մտնեն և փրկեն իր կացութիւնը։

Ռուս զօրքերը Թէպրիզի նոր կառավարիչ կարգուելուն պէս պէտք էր հեռանային, այժմ անպայման կերպով յետաձգեր են։ Պարսիկ ժողովուրդը շատ գրգռուած է ռուսներու կոպիտ արարքներուն դէմ և ամէն կողմէ բողոքներ կը տեղան, այն ատենն որ Թէպրիզի վաճառականները որոշած են պայկոտ հրատարակել Ռուսիոյ ապրանքներուն դէմ և դիմել եւրոպական գործարաններուն, նոյնիսկ ռուս ազատական մամուլը չկրնալով համբերել ռուս բանակի անպատշաճ և տմարդի վարմունքին դէմ դէպի պարսիկները կը պահանջէ որ Մնարսկի ետ կանչուի իբր անարժան զօրավար մը՝ որ պատիւ չբերեր Ռուսիոյ։

Պարսիկ սահմանադրականները յատուկ ներկայացուցիչ ղրկած են եւրոպական պետութեանց մօտ Թէպրիզի ռուսական գրաւման դէմ բողոքելու համար։ Գերման սկան մամուլը ջերմ կերպով կը պաշտպանէ պարսից տեսակէտը։ Թիւրքիան Թէև ներքին ծանրակշիռ հոգերով զբաղած, չկրնար սակայն լուռ և անտարբեր մնալ ռուսական այդ քայլին հանդէպ։ Արդէն լուր կայ որ Թիւրքերը կ'առաջանան մինչև Մարաղա, հակակշռելու համար ռուսաց նպատակը։ Պարսիկները ոչինչ կարող են ընել բացի պլատոնական ու հայրենասիրական բողոքներէն քանի որ ոչ մէկ զինուորական ուժ չեն ներկայացներ և իրենց Շահերուն ու հաքիմներուն միակ նպատակն եղած է մինչև օրս, որքան հնար է, թշուառացնել ժողովուրդը, ծծել զայն և ձգել երկիրը անպաշտպան ու տարբական դրութեան մէջ։

Ռուսական միջամտութիւնը և վրդովեցնող ընթացքը անպայման պարսիկ ժողովրդին ատելութիւնը շարժեց։ Ռուսները փոխանակ սիրաշահ քաղաքականութեան մը հետեւելու, ընդհակառակը որքան կրնային պարսիկ ժողովրդի մէջ առաջ բերին հակառուսական տրամադրութիւն որ հեռու է ռուսներուն մէջ տեսնել բարեկամական ոգի։ Սնարքի նայնքան առաջ գնաց որ հալածեց Սատտար և Պաղիր խաներու պէս ժողովրդական հերոսները և ստեղծեց չնչին պատրուակներ տուգանքի դատապարտելու զանոնք. նոյնիսկ Սատտար խանի տունը ուզեր է գրաւել, եթէ անոր վրայ անմիջապէս օսմանեան դրօշակը չպարզուէր։ Ռուս զօրավարին բռնական և զզուելի ընթացքը դուրս կելլէ օտարականները պաշտպանելու պարզ միջամտութենէն. ան կը վարուի իբր տանտէր։ Ժողովրդական երկու հերոսները, որոնք այնքան արիութիւնով իրենց հայրենիքի ազատութեան դատը պաշտպանեցին, արդար զայրոյթով լեցուած բողոքած են Ռուսիոյ ոտնձգութիւններուն դէմ։ Անոնք յարգանք միայն կրնային ներշնչել ուէ թշնամի եթէ անոր մէջ ասպետական ոգի կայ։ Այժմ անոնք, ռուսաց հալածանքէն՝ ապաստանած են տաճկաց դեսպանատունը և կը վայելեն օսմանեան դրօշակին հովանաւորութիւնը. Թէպրիզի ժողովուրդը նմանապէս դժգոհ ռուսներէն որոշած է օսմանեան հովանաւորութեան տակ մտնել և ի հարկին անոր միջամտութիւնը հրաւիրել։ Խընդիրը արդէն կը լրջանայ։

Ռուսաստանը թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ իր բեւեռատեղը կորսնցուցած է և ո՞վ կրնայ հակասդնել որ խելայեղ ցարիզմը նոր Մանչուրի մը չպատրաստեր Արարատի ուարահարթին վրայ, ուր կը կարծէ թէ դեռ բաւական կան հայերը որոնց վրայ իր արիւնռուշտ խաչապաշտի հովանաւորութիւնը տարածելով կրնայ կոտորել տալ զանոնք և... միջամտել։

ՆԻՐԱՏԻՊԻԹԻՒՆ

Պալբանեան Կեդր. Կօմիտէն ստացած է՝

ՌՈՒՍՁՈՒԴԻ ԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն). — Սօմօվիտէն անդամավճար 87 ֆրանկ, Թրնօվայէն անդամավճ. 31, Սօմօվիտէն դատավարութեան համար 15, Սօֆիայէն դատավար. համար 20: Խմբերէ՝ Սիփան 3 ֆր., եւս 19, եւս 21, Վրէժ 33, Շաֆէ 22, Մանուէլեան 45, եւս 11, Հրայր 26, Բաբկէն Սիւնի 21, Թաթուլ 22, Ճուրնովայի Մոկուցի 53, Թրնովայի Վազր 46, Շիբրովի Կայծակ 48, Դրօշակի բաժնեգիրներէ 45: Գումար 568 ֆրանկ:

ՎԱՌՆԱՑԻ ԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն).—Հետեւեալ խմբերէ՝ Տարօն 4 ֆր., եւս 23, եւս 58, Հայրիկ 6, եւս 34, Առիւծ 18, եւս 18, Կուկունեան 4, եւս 23, եւս 31, Յառաջդիմական 3, եւս 36, եւս 52, Մարտիկ 9, Բոլսի 4, Ռշտունի 83, Անդրանիկ 13, Խ. Զ. Ս. 33, եւս 97, փոքրիկ 18, ծախսած հրատարակութիւններէ 6. 60, եւս 26. 35: Գումար 571. ֆր. 95 սանտիմ:

ՍԼԻՎԼԷՆԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն).—Հետեւեալ խմբերէ՝ Գարաբուճարի Պեսօ 46 ֆր., եւս 63, Գարաբուճարի Սերոբ փաշա 24, եւս 40, Գարաբուճարի Հրայր 50. Բասնէ-Մանալէի Ազաս 21, եւս 36, Բասնէ-Մանալէի Դրախտ 20, եւս 31, Բասնէ-Մանալէի Սերոբ փաշա 21, եւս 31, Եամպոլի Կայծակ 29, Սլիվլէնի Քրիստափոր 42, Սէրէմնեան 34. 60, Անդրանիկ 28, Պայքար 14, խառքերէ 16: Գումար 546 ֆր. 60 սանտիմ:

ՖԻԼԻՊԷԻ ԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն).—Հետեւեալ խմբերէ՝ Պորիսովիադի Շմաւոնեան խումբի Ա. տասնեակ 24 ֆր., եւս 40, Բ. տասնեակ 25, Թ. Բազարնրգի Թէդայի 28, Հասքօյոյի Գէորգ Զաւուշ 27, Գայանրգի Անձնուրաց 15, Ֆիլիպէի Հեքում-Գագիկ 102, եւս 38, Վասպուրական 21, Տէրոր 25, Վազգէն 69, Հրայր 30, Տարօն 23, եւս 24, Քրիստափոր 24, Օր. Կարմիր Խաչի Ա. տասնեակ 16. 50, Բ. տասնեակ 23. 50, Արամեան 39, Վրէժի Ա. տասնեակ 27, Բաբկէն Սիւնի 42, Պատանեաց Վ. Մանուէլեան 100, Հրայր խ. հանգանակութենէն 19, Դրօշակի բաժնեգիրներէ 57, տուգանքէ Ս. Դ. 50: Գումար 889 ֆր.:

ՓՈՐԹԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն). — Հետեւեալ խումբերէ՝ Զորս Գանձ 28. 50 ֆր., Եփրաս 30, Ղեւոնդեան 18, Վազգէն 12, Գէորգ Զաւուշ 10. 20, Աղուարդ 41, Սերոբ 40, Դեւեան 17. 90, Անդրանիկ 10, հրատարակութիւններէ 34. 20, Դրօշակի բաբնեգիր 54, սրճարանի հասոյթ 505. 85: Գումար 801. 65 ֆր.: Դ. Խ.-է գանձած դրամ 400 ֆր., սրճարանի հասոյթ 461. խմբերէ՝ Դեւեան 4. 50, եւս 34. 60, Ղեւոնդեան 4. 50, Գէորգ Զաւուշ 27. 80, Զորս Գանձ 22, Աղուարդ 40, Եփրաս 42, Սերոբ 63, հրատարակութիւններէ 42. 70, Դրօշակի բաժնեգիր 12: Ընդհանուր գումար 1154 ֆր. 10 սանտիմ:

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն).—X սրճարանի հասոյթ 454. 55 ֆր., եւս 363. 60, Տիկ. Կարմիր Խաչի գանձանակէ 96, եւս 98, խմբերէ՝ Նոր Դար 60, եւս 69, Նէմրուտ 30, եւս 27, Թէդայի 24, եւս 33, Սերոբ-Աղբիւր 30. եւս 51, Սեպուհ 24, եւս 33, Զինուոր 21, եւս 21, Հազուլ 21, եւս 28. 50, Կարին 27, եւս 45, Վարազ 33, եւս 51, Արարատ 39, եւս 30, Կայծակ 21, Պարքեւ 31, Տիկ. Արամ 24. 50, տուգանք Փարայրէ 10, տուգանք Պողպատէ 10, նուէր՝ Պանէն 5, Համզօք 5, Կայծակէ 5, Փարամազէ 5, Մարգիսէ 5, Ռուբէնէ 5: Գումար 1836 ֆր. 15 սանտիմ:

ԵՓՐԱՏ ԵՆԹԱԿՕՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն).—Սրճարանի հասոյթ՝ հին հաւէն 3560. 75 ֆր., նոր հաւէն 819. 85. խմբերէ՝ Ծերունի 156, Արծիւ 84, Տարօն 141, Տալլորիկ 126, Գայլ 116, Արեգակ 78, Արարատ 150, Ասպիկ 120, հին անդամավճարներ 35, նուիրատուութիւններէ 18: Գումար 5404 ֆր. 60 ֆր.:

(Շարունակելի)